Ազգ
Azg
22 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2010 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 171 (4551)
ISSN: 1829-1651

## Հարավաֆրիկացիները նույնպես նպաստում են Ադրբեջանի զինմանը

Հարավաֆրիկյան Paramount Group ընկերության նախագահ Իվոր Իչիկովիցը Reuters գործակալության տված հարցազրույցում նշել է, որ իր ընկերությունը մտադրվել է Ադրբեջանում եւ Հնդկաստանում մեծացնել արտադրության ծավալները: Այդ նպատակով ընկերությունը նախատեսում է մինչեւ 2015-ը մեկ միլիարդ դոլարի ներդրում անել: Ադրբեջանի հետ համագործակցության առումով Իչիկովիցը ընդգծել է, որ Բաքվում իրենք սկսել են ականակայուն տեխնիկայի երկու տեսակների արտադրություն. «Գործարանը մենք գրեթե գործարկել ենք եւ սկսում ենք երկու նոր մոդելների արտադրություն: Բաքվի գործարանը ամսական կարտադրի 5-7 միավոր տեխնիկա», նշել է Իչիկովիցը:

Հ. Ա.

# Խաչի բացակայությունը հոգեւոր հրճվանքը կիսատ է թողնում

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Վան. Աղթամար-Երեւան

Քանի՞ հազար պատարագ պետք է հնչի Թուրքիայի տարածքում մնացած հայոց եկեղեցիներում, որ թուրքերը գոնե դույզն ինչ մաքրվեն մարդկության առաջ գործած մեծագույն մեղքի՝ Հայոց ցեղասպանության մի փշուրից միայն, եւ արդյոք ոճրագործն ընդհանրապես կարո՞ղ է մաքրվել՝ ուրանալով իր գործած ոճիրը եւ չընդունելով մեղքը: Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու մեկ պատարագով, եւ այն էլ առանց եկեղեցու գմբեթին տեղադրված խաչի, հազիվ թե մարմին ստացավ թուրքական իշխանության՝ աշխարհի աչքում տոլերանտ եւ հանդուրժող ձեւանալու ձգտումը. անցած կիրակի քաղաքակիրթ եւ հանդուրժողական երեւալու թուրքական երազանքը զրոյի հավասարվեց, ինչպես «Զրո պրոբլեմ հարեւանների հետ» կարգախոսն է զրո, քանի որ խաչի չտեղադրումը Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու գմբեթին ի չիք դարձրեց հայ ուխտավորների չվերջացող շարքեր տեսնելու թուրքական ակնկալիքը:



«Գարդեն Վան» հյուրանոցի հենց մուտքի մոտ ոտքի տակ գցված է հայկական մի հարյուրամյա գորգ, որի մաշվող, բայց զարմանալիորեն գույները պահպանած նախշերը իրենց վերծանողին ուղղակի ճչալով հարցնում են. ո՞ւր է այս նախշերի տերը՝ վանեցի հայ մարդը, ի՞նչ է պատահել նրա հետ, ինչպե՞ս եւ ինչո՞ւ է հայկական սիմվոլների այդ հրաշալի զեստղարանը թուրքերի ու քրդերի ոտքերի տակ այստեղ ամեն օր ոտնակոխ արվում, ովքեր ամեն ինչ անում են մոռանալու նրա տիրոջը: Այդպես անխղճորեն հարյուր տարի ոտնակոխ են արվել հայկական մշակույթի հուշարձանները Թուրքիայում, այդպես անխղճորեն կեղծվել ու պղծվել են մշակույթի վկայարանները: Նույն «Գարդեն Վանում» հայերիս տալիս էին ուղեցույցներ ու քարտեզներ, որոնցից դեմքներիս էր խփում անամոթ կեղծիքն ու սուտը մի երկրի, որ ուրիշի մշակույթն ու ունեցվածքը խլելով է սեփական մշակույթ եւ երկիր ստեղծել:

Վանի հիմնադրման թուրքական վարկածում ոչ մի բառ չկա հայերի մասին՝ Վանն ի սկզբանե քրդական քաղաք է, ուրարտական Տուշպան հիմնել են քրդերը, Ուրարտուն քրդական պետություն է եղել, Արծրունիներն ու Վանի թագավորությունն ընդհանրապես հայերի հետ կապ չունեն: Ոտնիգլուխ շուռ տված, հերթագայությունը խախտած իբր պատմական անցքերում ժամանակագրական առումով թուրքավարի խառնված են խուռիները, ակ-կոյունլուներն ու ասորական Շամիրամը, որը մեկին մեկ Վանի հիմնադիր է նշանակված, հիշատակվում են բյուզանդացիք, էլ ով ասես. եւ ոչ մի հայ:

Տես էջ 4

## Ռուսաստանը Ադրբեջանին է վաճառել 62 հատ Տ-72 տանկ

**Ռուսական «ՌԻԱ-Նովոստի» գործակալության տեղեկացմամբ՝ Ռուսաստանը հայտնվել է հիմնական մարտական տանկեր մատակարարող երկրների ցուցակի առաջին տեղում: Այս մասին գործակալությանը հայտարարել է Զինամթերքի միջազգային առեւտրի վերլուծության կենտրոնի տնօրեն Իգոր Կորոտչենկոն: Նա նշել է, որ այս տեմպերով 2010-13-ին Ռուսաստանը կվաճառի 859 նոր տանկեր՝ ընդհանուր առմամբ ունենալով 2,75 մլրդ դոլարի եկամուտ: Կորոտչենկոն նշել է, որ ներկա պահին ռուսական տանկերի ամենախոշոր գնորդը Հնդկաստանն է. «2001-ի պայմանագրով այդ երկիրը գնեց 310 տանկ, իսկ 2007-ի պայմանագրով՝ եւս 347-ը», նշել է Կորոտչենկոն՝ հավելելով, որ վերջին տարիներին Մոսկվան տանկերի վաճառքի պայմանագրեր է կնքել նաեւ Ալժիրի (185 տանկ), Վենեսուելայի (92 տանկ), Ադրբեջանի (62 տանկ), Ուգանդայի, Թուրքմենստանի, Կիպրոսի եւ այլ երկրների հետ (Հայաստանը Կորոտչենկոն չի նշել-Հ. Ա.): Վերջում զինամթերքի միջազգային վաճառքի կենտրոնի տնօրենը նկատել է, որ 2010-13-ին ամբողջ աշխարհում կմեծանա մարտական տանկերի պահանջարկը շուրջ 20 տոկոսով՝ համեմատությամբ 2006-09-ի ժամանակահատվածի:**

## Շվեդիայի խորհրդարանում հայտնվեցին ռասիստներ

### *Վտանգված է Հայոց ցեղասպանության ճանաչման գործը*



Շվեդիայում կիրակի օրն անցկացված խորհրդարանական ընտրություններում «Դաշինք հանուն Շվեդիայի» կառավարող դաշինքը թեեւ հաղթեց, բայց չկարողացավ ապահովել բացարձակ մեծամասնություն: Վարչապետ Ֆրեդերիկ Ռեյնֆելդի ղեկավարած դաշինքի մեջ մտնում են Քրիստոնեա-դեմոկրատական, Ազատական եւ Չափավորական կուսակցությունները: Կառավարող աջամետ դաշինքին ընդամենը երկու տեղ չբավականացրեց բացարձակ մեծամասնություն ապահովելու համար: «Ֆիգարո» թերթի վերջնական տվյալների համաձայն, դաշինքի կուսակցությունները ստացել են բոլոր քվեների 49,2 տոկոսը եւ խորհրդարանում կունենան 173 տեղ:

Ձախ ուժերը ստացել են 43,6 տոկոս եւ կունենան 156 տեղ: Ձախերի առաջնորդ 53-ամյա Մոնա Սահլինը համարվում է հեռանկարային գործիչ: Ընտրություններից առաջ շատերը նույնիսկ ենթադրում էին, որ նա հաջողության դեպքում կդառնա Շվեդիայի առաջին կին վարչապետը:

Ընտրությունների գլխավոր անակնկալը, սակայն, ծայրահեղ աջերի կուսակցության՝ «Շվեդիայի դեմոկրատների» մուտքն է խորհրդարան: Ներգաղթի դեմ հանդես եկող եւ մասնավորապես մահմեդականների ներգաղթը 90 տոկոսով կրճատելու կոչեր անող այս կուսակցությունը ստացավ քվեների 5,8 տոկոսը:

Արդեն երկուշաբթի օրը Շվեդիայի տարբեր քաղաքներում բողոքի բազմամարդ ցույցեր տեղի ունեցան ծայրահեղ աջերի խորհրդարան մուտք գործելու կապակցությամբ:

Ենթադրվում է, որ ընտրություններում հաղթանակած աջերը, այնուամենայնիվ, դժվարություններ կունենան կառավարություն կազմելու գործում: Իսկ եթե դա նրանց հաջողվի, ապա Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը, որը նախաձեռնել էին ձախերը, կանգ կառնի առնվազն 4 տարով:

## Մեդվեդեւը երախտապարտ է Հայաստանի ժողովրդին, Օբաման՝ ամերիկահայերին

**Հայաստանի Հանրապետության անկախության 19-րդ տարեդարձի առթիվ նախագահ Սերժ Սարգսյանը բազմաթիվ շնորհավորական ուղերձներ է ստացել այլ պետությունների ղեկավարներից, հեղինակավոր միջազգային կազմակերպություններից, անհատ քաղաքացիներից:**

**Նախագահ Սարգսյանին ուղղված շնորհավորական ուղերձում ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը հիշատակել է Հայաստան վերջերս կատարած պետական այցելությունը. «Ես հերթական անգամ համոզվեցի, որ հայ-ռուսական բարեկամության եւ բարիդրացիության բազմադարյա ավանդույթները շարունակում են ամրապնդվել»:**

**«Մեր քաղաքացիները հպարտանում են մեր ընդհանուր պատմության փառավոր էջերով, համատեղ հաջողություններով եւ հաղթանակներով: Դրա վառ օրինակը «Պատվո բլուր» հուշահամալիրի վերականգնումն էր, որի բացմանը մենք Ձեզ հետ միասին մասնակցեցինք», ըստ պաշտոնական հաղորդագրության՝ նշված է Մեդվեդեւի նամակում, հավելմամբ. «Երախտապարտ ենք Հայաստանի ժողովրդին՝ մեր զինվորների հիշատակին հոգատարությամբ վերաբերվելու համար»:**

Տես էջ 2

## Օբամա-Ալիեւ հանդիպում՝ աֆղանական մոտիվներով

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի դեռեւս ամսվա սկզբին գրանցված ակտիվության ու ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների տարածաշրջանային այցելության ֆոնին որոշ իրադարձություններ կարող են առնվազն համատեքստային ազդեցություն ունենալ:

Ամեն դեպքում, արդեն իսկ Միացյալ Նահանգներում են Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գերատեսչությունների ղեկավարները: Մասնավորապես, սեպտեմբերի 20-ին Նյու Յորք է մեկնել Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի գլխավորած պատվիրակությունը՝ մասնակցելու ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 65-րդ նստաշրջանին: Ըստ պաշտոնական հաղորդագրության, Միացյալ Նահանգներում Նալբանդյանը մի շարք երկկողմ հանդիպումներ կունենա:

Նյու Յորքում Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների հանդիպման մասին որեւէ բան չի նշվում, սակայն չի կարելի բացառել նման հանդիպման հավանականությունը: Մյուս կողմից, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների վերջին երկու հայտարարությունները տարածաշրջան այցելությունից առաջ եւ հետո աշխատանքային այնպիսի գրաֆիկ էին մանրամասնել, որ առանձնակի անհրաժեշտություն չկա պաշտոնական ձեւակերպումներով հասկանալու, որ այդ հանդիպման հավանականությունը զգալիորեն մեծ է, թեեւ ոչ մի նոր բան դրանից ակնկալելի չէ:

Միեւնույն ժամանակ, ըստ ԱՄՆ ազգային անվտանգության հարցերով խորհրդականի տեղակալ, Աֆղանստանի եւ Պակիստանի հարցերով ԱՄՆ նախագահի հատուկ օգնական **Բեն Ռոդեսի** ներկայացման, եկող ուրբաթ՝ սեպտեմբերի 24-ին, ԱՄՆ-ում տեղի կունենա նախագահ Բարաք Օբամայի եւ Ադրբեջանի նախագահ Ալիեւ կրտսերի հանդիպումը: Ամերիկյան պաշտոնական հաղորդագրության համաձայն, Ռոդեսը հաստատել է, որ ուրբաթ առավոտյան տեղի կունենա Օբամա-Ալիեւ հանդիպումը, որի ընթացքում կքննարկվեն տարբեր հարցեր:

Ռոդեսն իր պարտքն է համարել նշել, թե Ադրբեջանը Միացյալ Նահանգների կարեւոր գործընկերներից է բավականին լայն հարցերի առումով, «ներառյալ մեր ջանքերն Աֆղանստանում»:

Կան թեմաներ, որոնք Ադրբեջանն իսկապես կարեւորում է Միացյալ Նահանգների համար, սակայն դժվար թե Օբամա-Ալիեւ հանդիպումը նվիրված լինի միայն էներգետիկ հարցերին կամ Աֆղանստանին: Ակնհայտորեն նախագահները կքննարկեն նաեւ ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային ընթացքը: Եվ եթե հաշվի առնենք, որ Ադրբեջանն առանձնակի երջանիկ չէ համանախագահների հետ վերջին հանդիպումներից ու, ամենայն հավանականությամբ, այն առաջարկներից, որ արվել են, ԱՄՆ-ում այս առնչությամբ «առեւտուր» կարող է իրականացվել, որի արդյունքների մասին հիմա դժվար է դատողություններ անել:

Ամեն դեպքում, ղարաբաղյան հակամարտության կարգավորման համատեքստում իրադարձությունները հաջորդում են իրար, սակայն տեսանելի ոչինչ տեղի չի ունենում ոչ թե գաղտնիության պատճառով, այլ գործընթացի «տեղապտույտների» հետեւանքով:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԶԳ

## Ընթացիկ

# Սերժ Սարգսյան. «Երբեք չենք խուսափել մարտահրավերներից»

Անկախության 19-ամյակի կապակցությամբ երեկ ՀՀ նախագահի նստավայրը մարդաշատ էր: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հավաստմամբ՝ տոնական օրերը լավ առիթ են գնահատանքի եւ դրվատանքի խոսքեր ուղղելու նրանց, ովքեր ամեն օր են արժանի մեր ուշադրությանը, ովքեր բարեխղճորեն կատարում են իրենց աշխատանքը, ովքեր առաջ են մղում մեր հասարակությանը: Երեկ գիտության, կրթության, մշակույթի գործիչներ եւ զինծառայողներ բարեխիղճ աշխատանքի ու մեծ վաստակի համար արժանացան շքանշանների:


ՖՈՏՈԼՈՒՐ

«Միշտ ասում ենք, որ մեզ համար ամենից կարեւոր արժեքը մարդն է, սակայն մեզ համար ամենից կարեւոր արժեքը վաստակաշատ մարդն է: Շնորհակալ ենք բոլոր նրանց, ովքեր իրենց տաղանդով, պատասխանատվությամբ անմռունչ կատարում են իրենց աշխատանքը: Շատ պարագաներում միգուցե նրանք չեն ստանում այն գնահատականը, որին արժանի են, բայց մարդու լավ ու բարեխիղճ գործը չի կարող մնալ առանց գնահատականի: Առջեւում մեր 20-ամյակի միջոցառումներն են: Սա պետության համար երիտասարդ, միեւնույն ժամանակ պարտավորեցնող տարիք է: Շատ բան է արվել, սակայն անելիքներն էլ շատ են: Առավել քան վստահ եմ, որ ձեր օժանդակությամբ մեր վաստակաշատ եւ տաղանդավոր այլ անհատների ակտիվ մասնակցությամբ կարողանալու ենք լուծել բոլոր այն պրոբլեմները, որ ծառացած են պետականության եւ պետության առջեւ: Երբեք չենք խուսափել մարտահրավերներից, որովհետեւ խուսափել նշանակում է անձնատուր լինել: Մեր տեսակն այդպիսին չէ», ներկաներին անկախության 19-ամյակի եւ արժանացած շքանշանների համար այսպես շնորհավորեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

Երկարամյա եւ բարեխիղճ պետական-հասարակական գործունեության համար Մուրադ Մուրադյանն արժանացավ Սուրբ Մեսրոպ Մաշտոց բարձրագույն պարգեւին: Մուրադյանը հիշում է, որ պետությանն անձնվեր ծառայելու համար դեռեւս 40 տարի առաջ արժանացել էր շքանշանի. հանձնում էր Անտոն Քոչինյանը, շքանշանն էլ բարձրագույնն էր՝ Լենինի անվան: «Այժմ երջանիկ եմ, որ անկախ Հայաստանում, նման կարեւոր տոնի ժամանակ հանրապետության նախագահը բարձր է գնահատում իմ աշխատանքն ու արժանացնում բարձրագույն պարգեւի՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոց շքանշանի», ասաց նա:

Կարեն Ջանիբեկյանն ու Ազատ Գասպարյանն էլ այլեւս ժողովրդական արտիստներ են: Ազատ Գասպարյանն այս պարգեւը դիտարկում է պետություն-ժողովուրդ-անհատ եռամիասնության մեջ: «Հուզված, ոգեւորված եւ շատ պարտադրող է, որ մշակութային ասպարեզում ստեղծագործող անհատին բարձր պարգեւի են արժանացնում, եւ պետությունը, անսալով ժողովրդի ձայնին, գնահատում է անհատի դերը»:

Բեմադրիչ Նարեկ Դուրյանն ու նկարչուհի Լուսիկ Ագուլեցին էլ Մովսես Խորենացի շքանշանակիրներ են:

Կրթության եւ գիտության բնագավառներում երկարամյա եւ բեղմնավոր գործունեության համար Սուրբ Մեսրոպ Մաշտոց շքանշանին արժանացավ վաստակաշատ լեզվաբան Հովհաննես Բարսեղյանը:

«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի տնօրենի գլխավոր խորհրդական Սեն Արեւշատյանը «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» առաջին աստիճանի մեդալակիր է: «Մի քանի տասնամյակ Մատենադարանում հավաքում եւ ուսումնասիրում ենք ձեռագրեր, որոնք մեր հոգեւոր զենքն են եւ հասարակությանը տալիս են հոգեկան կորով եւ կամքի ուժ»:

20-ամյա Արման Մանուկյանի կուրծքը զարդարում է ՀՀ Արիության մեդալը՝ սեպտեմբերի 4-ին հայրենիքի սահմանների պաշտպանության եւ ադրբեջանցի դիվերսանտին չեզոքացնելու համար: «Առաջին անգամներ» երեկ Մանուկյանի կյանքում շատ էին: Առաջին անգամ էր նախագահականում, առաջին անգամ ՀՀ նախագահը սեղմեց նրա ձեռքը եւ շնորհակալություն հայտնեց ծառայության համար:

«Լուսաբաց էր, առավոտյան վեց անց երեսունի կողմերը: Զգացողություններ չկային: Ադրբեջանցու հարձակումն անսպասելի էր, բայց մեր զգոնությունը չթուլացավ: Վախ չկար, հասկացա, որ ես սահմանում եմ, ու իմ պարտքը իմ հայրենիքը պաշտպանելն է: Ես իրան խփեցի գցեցի գետին», դեպքի մանրամասներն է նկարագրում Արմանը: Այսօր առավոտյան Արմանը կմեկնի՝ շարունակելու պաշտպանել հայրենիքի սահմանները:

Սակայն մինչ մեկնումը՝ մեկ գավաթ շամպայն, բարեմաղթություններ եւ նախագահի հետ ավանդական դարձած խմբակային լուսանկար:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐ

# Մեդվեդեւը երախտապարտ է Հայաստանի ժողովրդին, Օբաման՝ ամերիկահայերին

*1-ին էջից*

**Մեդվեդեւն ընդգծել է, որ Հայաստանը եւ Ռուսաստանը վստահության եւ համագործակցության հուսալի հիմքի վրա այսօր կառուցում են ռազմավարական գործընկերային հարաբերություններ, վարում ակտիվ քաղաքական երկխոսություն, տարածաշրջանային եւ միջազգային ասպարեզում ավելի ու ավելի արդյունավետ են համակարգում իրենց քայլերը:**

**ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի շնորհավորական ուղերձում ասված է. «Մեծարգո պարոն նախագահ, Միացյալ Նահանգները միանում է Ձեզ եւ ամբողջ հայ ժողովրդին՝ նշելու Հայաստանի անկախության օրը՝ սեպտեմբերի 21-ը»: «Այս առիթով մենք մեր գնահատանքն ու հարգանքն ենք հայտնում հայ ժողովրդի ոգու ու նվաճումների եւ աշխարհով մեկ ունեցած ձեռքբերումների վերաբերյալ: Միացյալ Նահանգները հպարտանում է մեր երկրների պատմական կապերով ու բարեկամությամբ եւ որպես պատիվ է ընդունում հայկական ծագումով ամերիկացիների բազմաթիվ ներդրումները մեր երկրում», ընդգծել է Օբաման իր շնորհավորական նամակում:**

**Հայաստանի Հանրապետության անկախության 19-րդ տարեդարձի առթիվ նախագահ Սերժ Սարգսյանին շնորհավորական ուղերձներ են հղել նաեւ Շվեդիայի թագավոր Կառլ Գուստավը, Եգիպտոսի Արաբական Հանրապետության նախագահ Հոսնի Մուբարաքը, Թուրքիայի Հանրապետության նախագահ Աբդուլլահ Գյուլը, Սերբիայի Հանրապետության նախագահ Բորիս Տադիչը, Շվեյցարիայի նախագահ Դորիս Լոյտարդը, ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը, ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան եւ այլք:**

Ա. Հ.

# Քլինթոնի առաջին շնորհավորանքն Անկախության տոնի առթիվ

**«Հայաստանի ժողովրդին մաղթում եմ ապահով ու երջանիկ Անկախության օր, հետագա տարիների խաղաղությամբ եւ բարգավաճմամբ», Հայաստանի անկախության տոնի կապակցությամբ այսպիսի հայտարարությամբ է հանդես եկել ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Ռոդհամ Քլինթոնը: Առաջին անգամ է, երբ նախագահական ընդունված նամակին զուգահեռ, բավականին տարբեր ընկալում առաջացնող նման հայտարարություն է արվում ԱՄՆ պետքարտուղարի անունից:**

**Սեպտեմբերի 20-ին ուղարկված նամակում Քլինթոնը նշում է, որ նախագահ Օբամայի եւ Միացյալ Նահանգների ժողովրդի անունից՝ «շնորհավորում եմ Հայաստանի ժողովրդին սեպտեմբերի 21-ի Անկախության տոնի կապակցությամբ»: «Ես զգացել եմ հայ ժողովրդի հյուրասիրությունը, երբ ավելի վաղ՝ այս տարի այցելեցի Երեւան», հայտարարության մեջ նշում է Քլինթոնն ու ավելացնում, որ պատիվ է ունեցել ԱՄՆ ազգային անկախության օրը՝ հուլիսի 4-ն անցկացնել Հայաստանում: Քլինթոնի խոսքերով՝ «Ես պարտ եմ հիշատակելու Հայաստանի հարուստ մշակույթն ու բազմաթիվ ձեռքբերումները ձեր անկախության տոնին»:**

**Հայկական ծագմամբ ամերիկացիներն, ըստ Քլինթոնի, տարիների ընթացքում մեծ ներդրում ունեն Միացյալ Նահանգներում՝ խորացնելով ԱՄՆ-ի եւ Հայաստանի միջեւ ընկերության եւ մտերմության կապերը: «Մենք հակված ենք ընդլայնելու մեր համագործակցությունն ու մեր քաղաքացիների համար ավելի լավ ապագա ստեղծելու», ասվում է նամակում:**

**Հասկանալի է, որ ամենից առաջ Հայաստան վերջերս կատարած այցելությունն է առիթ դարձել ԱՄՆ նախագահի նամակին զուգահեռ եւս մեկ շնորհավորական նամակով Քլինթոնի հանդես գալու համար: Սակայն, ամենայն հավանականությամբ, միամտություն կլինի կարծել, թե այսօրինակ շնորհավորանքը Քլինթոնի՝ հայ ժողովրդի հյուրասիրության դիմաց երախտագիտության արդյունք է միայն:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Մեզ մի փորձեք վախեցնել, մենք վախեցող տեսակից չենք»

«Մեր ժողովրդի պատմությունը հանուն ազատության մղվող պայքարի պատմություն է: Այն փոփոխական հաջողություններով շարունակվել է դարեր, հազարամյակներ, հզորացել կամ թուլացել, բայց երբեք չի դադարել: Նախարարական տները՝ թիկունքում ունենալով համազգային աջակցություն, իրար են փոխանցել հայ ինքնության, ոգու եւ պետականության դրոշը»: Այսպես սկսեց շնորհավորական իր ելույթը նախագահ **Սերժ Սարգսյանը** Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում՝ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի, քաղաքական գործիչների, մտավորականների եւ դեսպանների մասնակցությամբ Հայաստանի անկախության 19-ամյակին նվիրված արարողության ժամանակ:

Նախագահի մատուցմամբ հազարամյա պատմության եւ մաքառումների արդյունքում մնաց մի ժառանգություն, որը հարուստ եւ պարտավորեցնող է: «1991թ սեպտեմբերի 21-ին հայ ժողովուրդն ի լուր աշխարհի բարձրաձայնեց այն, ինչը երբեմն ստիպված էր ասել մտքում կամ շշուկով: Բարձրաձայն ասաց՝ այո՛, տե՛ր եմ իմ ժառանգությանը, ինքնությանը, դրոշին ու պետականությանը, տեր եմ պատմական պատասխանատվությանը: Պատրաստ եմ համախմբվել գաղափարի շուրջը, միջոցներ կենտրոնացնել հանուն սուրբ նպատակի, կռվել ու բանակցել, կառուցել եւ արարել»:

Նախագահի գնահատմամբ՝ 19-ամյա անկախության ընթացքում եղել են թերացումներ, կոպիտ սխալներ, սակայն ճակատագրական սխալ, որը կվտանգեր երկրի ազատությանն ու անվտանգությանը, չի արձանագրվել:

«Հաղթահարել ենք փորձություններ ու դասեր քաղել: Շարունակում ենք զարգանալ անօրինական շրջափակման պայմաններում: Ոչ ոքի թշնամի չենք համարում, բայց ունենք հարեւաններ, որոնց խոսքն ու գործը թշնամական բնույթ ունեն: Զինադադարի հաճախակիացած խախտումները, բացահայտ սադրիչ եւ ահաբեկչական գործողությունները շփման գծում համարժեք պատասխան են ստանում՝ բազմապատկելով մեր զգոնությունը: Գնում ենք դժվար, բայց միակ ճիշտ ճանապարհով: Դա Արցախի անկախության եւ տեւական խաղաղության ճանապարհն է: Այդ ճանապարհին հիշեցնում ենք. մեզ մի՛ փորձեք վախեցնել, մենք վախեցող տեսակից չենք, մի՛ հոխորտացեք ու ինքներդ ձեզ հիմար դրության մեջ մի դրեք, մեզ չի կարելի պարտադրել, մենք հնազանդ տեսակից չենք, բայց պատրաստ ենք խոսել ու արդար որոշումների շուրջը ձեռք սեղմել», եզրափակեց նախագահ Սարգսյանը:

«Սեպտեմբերի 21-ը բացառիկ տոն է: Պետություններն այդքան էլ հեշտությամբ չեն կայանում: Բազմաթիվ խնդիրներ, դժվարություններ պետք է հաղթահարենք, սակայն փաստ է այն, որ կայանում է ոչ թե մեկ, այլ երկու հայկական պետություն՝ Հայաստանի Հանրապետություն եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն», ասաց ՀՀ փոխարտգործնախարար **Շավարշ Քոչարյանը**: Անկախության վտանգի մասին խոսակցությունները նա ոչ միայն լուրջ չի ընդունում, այլեւ որակում է չափազանցություն: «Երբ պայքարում էինք Հայաստանի անկախության համար, մարդիկ կային, որ խոսում էին անկախության վտանգի մասին: Ո՞ւր են այսօր այդ մարդիկ: Անկախության կորստի վտանգ չկա», ասաց նա:

Սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը** անկախ Հայաստանի պատմությունը նմանեցնում է երեքհարկանի բնակարանի: Առաջին հարկում երկու տարվա կենսագրություն ունեցող առաջին պետությունն է, երկրորդ հարկում՝ 70-ամյա Խորհրդային Հայաստանի պատմությունն է, երրորդ հարկում՝ 19-ամյա Հայաստանի Հանրապետությունը, որ շարունակվում է գրվել:

«Երրորդ հարկը վերեւից դիտող, պատմությունից դասեր քաղած եւ դեպի ապագան գնացող Հայաստանն է»:

«Շնորհավորում եմ հայ ժողովրդին անկախության 19-ամյակի կապակցությամբ: Այս տարիների ընթացքում ունեցել ենք տնտեսական զարգացում, մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից արձանագրվում է աճ: Իհարկե կան խնդիրներ, սակայն Հայաստանը ժողովրդավարական պետություն դառնալու ճանապարհին է, եւ ԱՄՆ-ն երջանիկ է, որ աջակցում է Հայաստանին այդ ճանապարհով գնալու եւ հաստատվելու համար», «**Ազգի**» հետ զրույցում ասաց ԱՄՆ դեսպան **Մարի Յովանովիչը**:

«Սեպտեմբերի 21-ը շատ կարեւոր օր է Հայաստանի համար: Իմ եւ երկրի նախագահի անունից շնորհավորում եմ հայ ժողովրդին: Մաղթում եմ, որ Հայաստանի երկինքը միշտ լինի անամպ եւ խաղաղ», սա էլ ԻԻՀ դեսպան **Սայիդ Ալի Սաղաիյանի** շնորհավորանքն է:

Հ. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ադրբեջանի դիրքորոշումը հավանաբար ավելի կկոշտանա

Թուրքալեզու երկրների ստամբուլյան գագաթաժողովում թուրք-ադրբեջանական համագործակցության բարձրագույն խորհուրդ ստեղծելու առնչությամբ հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ ԼՂՀ Ազգային ժողովի արտաքին հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Վահրամ Աթանեսյանը** խորհրդանշական է համարել թուրք-ադրբեջանական տանդեմի տվյալ նախաձեռնությունը: Ուղիղ 92 տարի առաջ՝ 1918թ. սեպտեմբերի 15-ին, թուրքական էքսպեդիցիոն կորպուսը Կովկասի իսլամական բանակի անվան տակ օկուպացրել էր Բաքուն եւ դաժան հաշվեհարդար տեսել տեղի հայ բնակչության նկատմամբ: Այդ ագրեսիան մի սլաքով ուղղված էր նաեւ Արցախի ժողովրդի դեմ, սակայն Ղարաբաղի հայերի ինքնակազմակերպման շնորհիվ կանխվել է արցախահայերի զանգվածային կոտորածը: Թուրքական էքսպեդիցիոն ուժերի կողմից, այդուհանդերձ, 1920-ի մարտի 23-ին հայկական Շուշին հրի ու սրի էր մատնվել:

Պատգամավորի համոզմամբ, ստամբուլյան գագաթաժողովն իր հիմնական նպատակադրության մեջ ձախողվել է, քանզի մասնակից թուրքախոս երկրները միջոցառման ավարտից հետո հանդես չեն եկել համատեղ հայտարարությամբ, իսկ հրավիրված մամուլի ասուլիսին մասնակցել են միայն Թուրքիան եւ Ադրբեջանը:

Ասուլիսում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի ափսոսանք հայտնելը, ըստ որի «պատմական անարդարություն է տեղի ունեցել՝ Սյունիքը Հայաստանի տիրապետությանը հանձնելով», վկայում է հարեւան երկրի պանթուրքիստական հավակնությունների մասին: Թուրքիայի ջանքերը՝ ներգրավվել ղարաբաղյան կարգավորման բանակցություններում, անընդունելի են Ղարաբաղի քաղաքական ուժերի կողմից, շեշտեց Վ. Աթանեսյանը: Իսկ ստամբուլյան գագաթաժողովն ուղղված է հենց Հայաստանի ու ԼՂՀ-ի դեմ, եւ երկու հայկական պետությունները խնդիր ունեն լրջորեն ուսումնասիրել մարտահրավերները ու համարժեք քայլեր ձեռնարկել:

«Թուրք-ադրբեջանական համագործակցության բարձրագույն խորհրդի ձեւավորումը կասկածի տակ է դնում ԵԱՀԿ Մինսկի խմբի հետագա գործունեության արդյունավետությունը, քանզի Ադրբեջանի դիրքորոշումը հավանաբար ավելի կկոշտանա», կարծիք հայտնեց Արցախի խորհրդարանի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահը:

Լրագրողների խնդրանքով Վահրամ Աթանեսյանն անդրադարձավ նաեւ հաճախակի դարձած սահմանային միջադեպերին: Ադրբեջանն ուզում է ներշնչել, որ պատերազմն անխուսափելի է, մինչդեռ մենք գտնում ենք, որ խաղաղ լուծման պատուհան դեռեւս կա: Ու եթե Ադրբեջանը փորձում է փակել այդ պատուհանը, ապա նա իր վրա է վերցնում հնարավոր հետեւանքների ամբողջ պատասխանատվությունը:

Սահմանում տեղի ունեցող դիվերսիոն բնույթի գործողությունները Ադրբեջանի կողմից պարզապես սեփական ուժերի փորձարկման նպատակ ունեն: Այն փաստը, որ այդ դիվերսիաներով ադրբեջանցիներին չի հաջողվում դիրքային առաջխաղացում ապահովել, նշանակում է, որ ուժերի հավասարակշռությունը պահպանվում է, նշեց ԱԺ պատգամավորը:

**ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**
**Ստեփանակերտ**

# Ի՞նչ կարող է անել Եվրոմիությունը Ղարաբաղում

«Հայաստանի եվրոպական բարեկամներ» կազմակերպության պատվերով անցկացված այս հարցմանը, ինչպես «Ազատություն» ռադիոկայանին նշել է կազմակերպության ավագ գիտաշխատող **Սարգիս Ղազարյանը**, մասնակցել են Եվրախորհրդարանի շուրջ 100 պատգամավորներ տարբեր երկրներից: Առաջարկված 5 տարբերակներից եվրոպացի պատգամավորներն առանձնացրել են երկուսը. հարցվածների շուրջ 47 տոկոսը ամենանախընտրելի տարբերակ են համարել Եվրոմիության մշտական ոչ ռազմական դիտորդական առաքելության ուղարկումը տարածաշրջան՝ «հրադադարի ռեժիմն ամրապնդելու, ինչպես նաեւ ժողովրդավարական կառույցների եւ ինստիտուտների կայացմանը նպաստելու համար»: Այս հանգամանքը բավական հետաքրքրական է այն առումով, որ եթե Եվրոմիությունը կոնկրետ, ամբողջովին պաշտպանում է Ադրբեջանի այսպես կոչված տարածքային ամբողջականությունը, ապա «ի՞նչ կարիք կա» նպաստելու Ղարաբաղում ժողովրդավարական կառույցների եւ ինստիտուտների կայացմանը:

Եվրոպացի պատգամավորների նախընտրած մյուս լուծումը հետեւյալն է. «Կողմերի միջեւ (հիշեցնենք՝ երեք կողմերի-Հ. Ա.) կնքված հրադադարի պայմանագրի ամրապնդում՝ շփման գծից դիպուկահարներին հեռացնելու եւ տեղում միջազգային դիտորդներ տեղակայելու միջոցով», այս տարբերակին կողմ է արտահայտվել եվրոպացի պատգամավորների 39 տոկոսը:

Հատկանշական է, որ հարցված պատգամավորների միայն 20 տոկոսը կողմ է արտահայտվել առաջարկին՝ տարածաշրջանում տեղակայել եվրոպական ռազմական ուժեր: Այս առաջարկը, ենթադրվում է, որ չի արժանացել շատերի հավանությանը, քանի որ եվրոպական ռազմական ուժերը ակտիվորեն ներգրավված են արդեն Մերձավոր Արեւելքում, եւ եվրոպացիները չէին ցանկանա եւս մեկ նման օջախ ձեռք բերել:

«Ո՞րն է հրադադարի ամրապնդման ամենաանհավանական տարբերակը» հարցին եվրոպացի պատգամավորների մեծամասնությունը պատասխանել է. «ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության դադարեցումը»: Սարգիս Ղազարյանը «Ազատություն» ռադիոկայանին փոխանցել է, որ «ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության դադարեցում եւ դրա փոխարեն մեկ այլ ձեւաչափի հաստատում» տարբերակին՝ որպես հրադադարի ռեժիմի ավելի արդյունավետ պահպանման միջոցի՝ կողմ է արտահայտվել պատգամավորների ընդամենը 17 տոկոսը: **Հ. Ա.**

# Անկախության օրը նաեւ Խաղաղության միջազգային օր

*ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը դիմել է աշխարհի երիտասարդությանը*

Սեպտեմբերի 21-ին նշվում է Խաղաղության միջազգային օրը: Օրվա առթիվ ուղերձ է հղել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար **Բան Կի Մունը**: «Այսօր մենք նշում ենք ամենամյա Խաղաղության միջազգային օրը՝ նվիրված հրադադարին եւ բռնության դեմ պայքարին: Խաղաղությունն անգնահատելի է: Այն անհրաժեշտ է փայփայել, պահպանել եւ պաշտպանել:

Ահա թե ինչու ամեն տարի՝ Խաղաղության միջազգային օրը, ես Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական գրասենյակում խաղաղության զանգն եմ հնչեցնում: Ահա ինչու ամեն օր աշխատում եմ հանուն խաղաղության: Ես հանդես եմ գալիս որպես միջնորդ հակամարտող կողմերի միջեւ: Ես տագնապի ահազանգ եմ հնչեցնում, երբ սպառնալիք է առաջանում. սպառնալիք, որը հստակ տեսանելի է, եւ սպառնալիք, որը թաքնված է հեռուներում: Ես խթանում եմ հանդուրժողականություն, արդարություն եւ մարդու իրավունքներ, ինչպես նաեւ համերաշխություն եմ քարոզում երկրների ու ժողովուրդների միջեւ:

Այս տարի Խաղաղության օրը նվիրված է երիտասարդությանը: Այս ամիսը նշանավորում է Երիտասարդության միջազգային տարվա սկիզբը: «Երկխոսություն եւ փոխըմբռնում» կարգախոսն արտահայտում է խաղաղության բուն էությունը: Այսօր երիտասարդությունը քաջ գիտակցում է, թե ինչ է համընդհանուր բազմազանությունը, նա իրեն լավ է զգում փոխկապակցված աշխարհում: Բայց եւ միաժամանակ երիտասարդությունը կարող է ծայրահեղական ուժերի զոհը դառնալ: Ահա թե ինչու կոչ եմ անում բոլոր կառավարություններին եւ մեր գործընկերներին՝ ավելին անել հանուն երիտասարդության: Եկեք երիտասարդներին խաղաղության ու հանդուրժողականության մոլորակ ժառանգենք: Այժմ դիմում եմ բոլոր երիտասարդներին. Միացեք մեզ: Օգնեք մեզ պայքարելու հանուն խաղաղության: Դուք անհամբեր եք: Դուք տեսնում եք, թե ինչպես ենք մենք՝ ավագ սերնդի մարդիկ, տարեցտարի հաշտվում աղքատության ու սովի, անարդարության, անպատժելիության եւ շրջակա միջավայրի վիճակի վատացման հետ: Մնացել է ընդամենը հինգ տարի, որպեսզի հասնենք Հազարամյակի զարգացման նպատակներին, եւ ես կոչ եմ անում բոլորին՝ թե՛ երիտասարդ մարդկանց, թե՛ ավագ սերնդի ներկայացուցիչներին՝ օգնել մեզ գտնելու այդ գլոբալ խնդիրների գլոբալ լուծումները: Տեղեկացրեք մեզ ձեր ծրագրերի ու գաղափարների մասին, ստեղծագործական մոտեցում եւ հետաքրքրություն ցուցաբերեք: Օգնեք մեզ պայքարելու հանուն խաղաղության եւ բոլորի բարգավաճման», ասված է գլխավոր քարտուղարի ուղերձում:

**Հ. Ա.**



# «Շանհայ Էքսպո-2010»-ում նշվել է Հայաստանի օրը




**Հայաստանի անկախության օրը երեկ նշվել է չինական Շանհայ քաղաքում, արդեն հինգ ամիս գործող «Շանհայ Էքսպո-2010» միջազգային ցուցահանդեսում: Այդ մասին տեղեկացանք կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից: Տոնական հանդիսությունները տեղի են ունեցել այս օրերին Չինաստանում գտնվող Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորած պատվիրակության մասնակցությամբ:**

**Չինաստանի կառավարության եւ ցուցահանդեսի կազմկոմիտեի անունից շնորհավորելով Հայաստանին անկախության օրվա կապակցությամբ, այդ երկրի «Ազգային աուդիտ» գրասենյակի գլխավոր տնօրեն Լիյ Թիայ Յինը շնորհակալություն է հայտնել հայկական կողմին ցուցահանդեսին գերազանց մասնակցության համար եւ հույս հայտնել, որ «Շանհայ Էքսպո-2010» լավ առիթ կլինի տնտեսական երկխոսության հետագա խորացման համար: Նա նաեւ ասել է. «Հայաստանում ապրում է հնագույն եւ իմաստուն մի ժողովուրդ, ծաղկում է յուրահատուկ հայկական մշակույթը: Այդ երկիրն աշխարհին տվել է համաշխարհային հեղինակության բազմաթիվ անուններ, իր ուրույն ավանդն է բերել համընդհանուր մշակույթի զարգացմանը՝ այս անգամ «Շանհայ Էքսպո»-ում ներկայացնելով «Աշխարհի քաղաք» իր ուրույն նախագիծը»:**

**Հայաստանի կառավարության անունից շնորհակալություն հայտնելով ՉԺՀ իշխանություններին ջերմ ընդունելության եւ բազմամիլիոն լսարանին աշխարհի պատգամի՝ Հայաստանի տեսլականը ներկայացնելու հնարավորության համար՝ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշել է, որ իր համար կրկնակի հաճելի է ելույթ ունենալ, քանի որ սեպտեմբերի 21-ը ոչ միայն Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման տոնն է, այլեւ Հայաստանի ազգային օրը «Շանհայ Էքսպո-2010»-ում: Վարչապետի գնահատմամբ, «Շանհայ Էքսպո-2010» ուրույն հնարավորություն է տալիս համատեղ աշխատանքի, քաղաքակրթության երկխոսության համար: Տիգրան Սարգսյանը բոլորին հրավիրել է մասնակցելու Արարատյան դաշտավայրում կառուցվելիք նոր քաղաքի շինարարությանը՝ հույս հայտնելով, որ այդ քաղաքի շինարարությունը նոր էջ կբացի ոչ միայն հայ ժողովրդի, այլեւ քաղաքակրթության պատմության համար:**

**Հաղորդագրության մեջ նաեւ նշվում է, որ Հայաստանի տաղավարը մեծ հետաքրքրություն է առաջացրել «Շանհայ Էքսպո-2010»-ի այցելուների շրջանում: Մասնավորապես, ցուցահանդեսի ավելի քան հիսուներեք միլիոն այցելուներից երկու միլիոնը եղել է նաեւ հայկական տաղավարում:** **Ա. Մ.**

# Տարածաշրջանում լավագույն հեծանվահրապարակը՝ Երեւանում




**Ծովակալ Իսակովի պողոտայի 27/8 հասցեում գտնվող 2 հա տարածքում արդեն ընթանում են 3200 հանդիսատեսի համար նախատեսված հեծանվահրապարակի շինարարական աշխատանքները՝ շուրջ 6 միլիարդ դրամի ներդրումային կապիտալով:**

**Սա Երեւանի քաղաքապետարանի եւ «Ռենկո» ընկերության համատեղ ներդրումային ծրագրի երկրորդ փուլն է:**

**«Ռենկո» հոլդինգի գլխավոր տնօրեն Ջովաննի Ռուբինին եւ քաղաքապետ Գագիկ Բեգլարյանը վստահեցնում են, որ 2 տարի հետո Երեւանում կառուցվող նոր հեծանվահրապարակը տարածաշրջանում լինելու է լավագույնը: Հեծանվահրապարակի ճարտարապետ Ռուբեն Հասրաթյանը Երեւանի քաղաքապետին ներկայացրել է հեծանվահրապարակի էսքիզներն ու նախագիծը:**

**Նոր հեծանվահրապարակը կունենա 250 մ երկարությամբ շրջագիծ, որի վազքային գոտու լայնությունը կազմում է 7 մ: Հարթակները եւ վազքուղին ծածկված կլինեն փայտե կոնստրուկցիաներով, որոնք 20 մ թռիչքով ձողակառույցներ են՝ տեղադրված 9.40 մ քայլով:**

**Տարածքում երկայնական առանցքով կտեղադրվի հեծանվահրապարակին պատկանող կառույց, որը կունենա նախամուտք, սրահ, մարզիկների եւ մարզիչների համար առանձին հանդերձարաններ՝ ցնցուղներով, երկու մարզասրահ նախապատրաստական եւ հետմարզական վարժման համար՝ կից հանդերձարաններով եւ ցնցուղներով, հեծանիվների պահման եւ նորոգման սենյակներ, ավտոկայանատեղեր, առաջին բուժօգնության սենյակ, կառույցի ղեկավարության համար գրասենյակներ, կոնֆերենս դահլիճ, ճաշարան, հասարակական սանհանգույցներ:**

# Խաչի բացակայությունը հոգեւոր հրճվանքը կիսատ է թողնում

*1-ին էջից*

Շատ էի ափսոսում, որ գեղեցիկ գրքույկների, քարտեզների եւ բուկլետների տեսքով մեզ եւ Վանի հյուրերին ներկայացվող ահա այս կեղծիքին ի պատասխան` հայերս պատրաստ չէինք ու հետներս չէինք տարել Վանի մասին անգլերենով մի հանրամատչելի ուղեցույց իսկական, չկեղծված պատմությամբ` Վան-Տոսպի, մ.թ.ա. 825-830-ին Սարդուրի հիմնած Տուշպայի, հետագայում Արծրունիների թագավորության Վան-Տոսպ մայրաքաղաքի մասին, որտեղ Մանվել ճարտարապետի կառուցած եւ միջազգային ճարտարապետության եզակի նմուշ Ս. Խաչ եկեղեցու հիմնադրման թվականն ու պատմությունը կնշեինք (թե ինչպես Գագիկ Արծրունին որոշեց իր նստավայրն Աղթամար կղզի փոխադրել, այստեղ պալատ եւ Ս. Խաչ եկեղեցին կառուցեց 915-921 թվականներին), կպատմեինք Եղեռնից առաջ հայկականությամբ շնչող ծաղկուն քաղաքի մասին, թուրքերի աչքը կմտցնեինք, որ 1910 թվականին Վանում ապրող 191 հազար բնակչությունից 185 հազարը հայ էր եւ 8 քարաշեն եկեղեցի կար բուն քաղաքում:

Վանի հերոսական ինքնապաշտպանությունն ու վանեցիների հանդեպ թուրքերի եղեռնագործության ողջ փաստերը կներկայացնեինք: Ափսոս, չենք մտածել, մտածել ենք գուցե, բայց իրականություն չենք դարձրել. բոյկոտելը` բոյկոտել, բայց սա նախ տեղեկատվական մարտ է, ու այդ մարտը մենք չենք ընդունել: Արդյունքում` Վանն այդ օրը հեղեղված էր գեղեցիկ փաթեթավորված թուրքական ստով` գունավոր այցեքարտեր, ուղեցույցներ, տեղեկագրեր, քարտեզներ, կրծքանշաններ, որոնք անվճար բաժանվում էին հյուրերին, իսկ հայկական տեսակետն այստեղ պարզապես բացակա էր, կամ լիովին բացակա կլիներ, եթե որոշ չափով ներկայացված չլինեին Ստամբուլի «Արաս» հայկական հրատարակչատան գրքերը:

Իսկ Աղթամարի Սուրբ խաչը «Գարդեն Վան» հյուրանոցի մուտքի հատակին փռված գորգին էր նման որոշ իմաստով` վերականգնված թանգարան եվրոպաներին ինչ-որ բան ցույց տալու համար. գորգի նման փրկվել էր, բայց էլի չէր վերադարձվել տիրոջը, քանի որ խաչը դնելուց ու Պոլսի հայոց պատրիարքարանին վերադարձվելուց հետո միայն եկեղեցին չի կրկնի Վանի հյուրանոցի մուտքի մոտ ոտնակոխ արվող հարյուրամյա գորգի ճակատագիրը, չի կրկնի հենց Վանա լճի ափագիծ շրջանների իննսուն վանքերի ճակատագիրը` նրանցից մնացել են պատմական հիշատակումներ, փլատակներ, կամ լավագույն դեպքում` կիսակործան պատերը:

## Սեպտեմբերի 19-ի Ս. Խաչի պատարագը

Անցած կիրակի Վանի Աղթամար կղզու Ս. Խաչ եկեղեցում հնչած պատարագը շրջակա լեռների բնապատկերին շատ գեղեցիկ երեւույթ էր: Իսկապես հուզիչ էր Պոլսո հայոց պատրիարքի փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանի հանդիսապետությամբ մատուցված հայոց պատարագի ելեւէջն այդ հինավուրց հայկական հողում, որ հարյուր տարի կարոտ էր մնացել հայ հոգեւոր խոսքի ու երաժշտության մաքրագործող թրթիռներին: Սակայն այդ գեղեցկությունը հայ մարդու սրտում արձագանք էր գտնում խուլ բողոքով` եկեղեցու մուտքի ձախ կողմում տեղադրված խաչն անտես կորչում էր ելումուտ անող մարդկանց ստվերների մեջ, իսկ գմբեթին դրված փոքրիկ գլխարկատիպ պոպոզը ավելի շատ մզկիթի մանրակերտ էր հիշեցնում. կարծես թուրքերն այդպիսով ակնարկել էին, թե մեր մզկիթի իշխանության տակ եք, ավելիին մի ձգտեք:

Հայեր եկել էին աշխարհի տարբեր երկրներից, Հայաստանից ուխտավորների երկու-երեք փոքրիկ խմբեր կային եւ մեր լրագրողական խումբը, ուխտավորներ էին եկել Լոս Անջելեսից, Հոլանդիայից, Գերմանիայից, Ֆրանսիայից եւ այլ երկրներից: Ստամբուլից ժամանած հայերի թիվը տարբեր տվյալներով տատանվում է 500-800 -ի սահմաններում: Բավական շատ թրքացած հայերի հանդիպեցինք, ովքեր առիթն օգտագործել էին` ուխտի գալու իրենց նախնիների դավանած հավատի խորհրդանիշ եւ աշխարհում իր ճարտարպետությամբ բավական հայտնի Աղթամարի Ս. Խաչ: Ասենք, որ մեր խումբն Աղթամար այցելեց նաեւ սեպտեմբերի 18-ին` ականատես լինելով, որ այդ օրն էլ բավական հայ ուխտավորներ այցելում էին կղզի:

Սեպտեմբերի 19-ին սակայն կղզի այցելած հայ ուխտավորների թիվը մի քանի անգամ պակաս էր թուրքերի ակնկալածից` խաչը չտեղադրելու պատճառով Մայր աթոռի, Կիլիկիո կաթողիկոսության, Երուսաղեմի հայոց պատրիարքարանի, աշխարհում սփռված հայոց թեմերի դիրքորոշումը` խաչի բացակայությամբ Աղթամար չգնալ, իր անդրադարձն ունեցավ. Հայաստանից ու Սփյուռքից շատ քիչ մարդ եկավ պատարագին, անգամ Ստամբուլի հայերից շատերը, որ ավելի վաղ ուզում էին այցելել Վան եւ Աղթամար, ի վերջո հրաժարվեցին այդ գաղափարից: Մեր զրույցները Ստամբուլի հայերի հետ տրամագծորեն հակառակ տեսակետներ էին ֆիքում. մի մասը նեղացած էր Հայաստանից, որ իրենց զգացմունքներին համապատասխան չվարվեց ու պաշտոնապես պատվիրակություն չուղարկեց 100 տարի հետո առաջին անգամ հնչող պատարագին, մյուս մասը համամիտ էր չեկողների հետ, բայց ցածրաձայն էր արտահայտվում, չուզենալով սակայն զրկվել պատարագի պարգեւած հոգեւոր վայելքից:

Թրքախոսները, հատկապես երբ իրենց բողոքն էին հայտնում խաչի չտեղադրման պարագայից` թուրք ոստիկաններ տեսնելուն պես փոխում էին խոսքը եւ շնորհակալ լինում թուրք կառավարությունից` եկեղեցին նորոգելու եւ պատարագով մաքրվելու այս հնարավորությունը ստեղծելու համար: Բուն պատարագին հավանաբար մի 1500 մարդ մասնակցեց, չնայած նախորդ եւ հաջորդ օրերին էլի ուխտավորներ էին այցելել կղզի: Որ գործարար թուրքերը հուսախաբ էին եղել` սա երեւում էր անգամ անզեն աչքով. Աղթամարի դիմաց, ափամերձ տարածքում թուրք եւ քուրդ մանր գործարարների այնքան մեքենաներ էին կանգնած, այնքան շատ առեւտրական սեղաններ էին դրված շարվեշարան, այնքան միրգ, մեղր, հուշանվեր կար, որ կհերիքեր մի քանի հազար ուխտավորի:



Պատարագի ժամանակ եկեղեցի մուտք գործել քչերին հաջողվեց` ներսում նեղվածք էր, բայց եկեղեցու բակում զույգ մեծ էկրաններից հնարավոր էր հետեւել պատարագին եւ ներսում տեղի ունեցողին:

Այդպես էլ հայտնի չեղավ կղզում հավատարմագրված լրագրողների թիվը` խոսք էր գնում մոտ երեքհարյուրի մասին, կոնկրետ իմ հավատարմագրի համարակալումը 297 էր, սակայն չի բացառվում, որ այդ հավատարմագրերի առաջին հարյուրը դատարկ համարների հերթագայություն լինի` հարմար թվեր նկարելու եւ ընդհանրապես փաստերն ըստ իրենց շահի աղավաղելու թուրքական ձեռագրից ամեն ինչ սպասելի է: Տարբեր երկրներից 150-200 լրագրողներ էին ժամանել, նրանց համար առանձին կացարան էր հավաքվել` ապահովելով ինտերնետ կապով: Բոլորին բաժանվում էր անգլերեն, հայերեն, թուրքերեն եւ քրդերեն լույս տեսած «Վան թայմսը»` սովորաբար 1000 օրինակով եւ միայն թրքերեն լույս տեսնող թերթը այդ օրերին 3 հազար օրինակով էր թողարկվել եւ բազմալեզու դառել. սա եւս ցույց էր տալիս Վանի իշխանությունների ակնկալիքը` շատ տուրիստների այցելության ուղղությամբ:

Սակայն թուրքական այս նախաձեռնության երկու երեսը պարզ դարձավ, քանի որ խաչը չտեղադրելով, թուրքերն այլեւս չկարողացան թաքցնել, որ իրենց իսկական նպատակը քարոզչականն է, աշխարհի աչքին ժողովրդավար երեւալն ու Աղթամարի պարագան որպես եվրոպաների աչքին պարզերես երեւալու միջոց :

Վանի նահանգապետ Քարալօղլուի տեղեկացմամբ, որը նա հայտնել է Պոլսո պատրիարքի փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանին, խաչը կտեղադրվի մեկուկես ամիս հետո: Արդյո՞ք սա նախապես ծրագրված մի հնարք է` մեկուկես ամիս հետո եկեղեցական տոներից մեկին հայ ուխտավորներին դեպի Աղթամար գայթակղելու եւ նորից իրենց «քաղաքակիրթ» կեցվածքի մասին աշխարհին խոսել տալու` այն ժամանակ կերեւա:

Թուրքերն աննախադեպ անվտանգության միջոցառումներ էին իրականացրել` կղզում վխտում էր ոստիկանությունը, ուխտավորների ամեն քայլին հետեւում էին, ամեն շարժվող բան թուրքերի ակնդետ հայացքի տակ էր, անգամ եկեղեցի բարձրացող զույգին չթողեցին երեխային սայլակով բարձրացնել վեր` սայլակը մնաց , երեխային ծնողները վերեւ` Ս. Խաչ գրկած տարան: Ոտքերը Վանա լճում թրջելու իմ ցանկությանն ի պատասխան` թուրք ոստիկանուհին նախ ոտքից գլուխ կասկածով զննեց ինձ եւ հետո թույլ տվեց իջնել մի քանի մետր` Վանա լճի աղի ջրի մեջ:



ՖՈՏՈԼՈՒՐ

## Փայտե խաչ պահողները հայ լրագրողներս էինք

Աշխարհի լրատվամիջոցները, մասնավորաբար ռուսական հեռուստաալիքները հայտնեցին, որ Ս. Խաչ եկեղեցու խաչը չտեղադրելու դեմ նաեւ բողոքող հայեր են եղել, որոնք փայտե խաչեր են պահել պատարագի ժամանակ` ի նշան խաչը չտեղադրելու թուրքական իշխանությունների որոշման: Իրականությունն այն է, որ Հայաստանից այլ ծրագրով (Հայնրիխ Բյոլլի եւ Հրանտ Դինքի հիմնադրամների շնորհիվ) Թուրքիա մեկնած լրագրողներս մեզ հետ խաչափայտեր էինք տարել, դա մեր խմբից «Պանորամա» լրատվական կայքի լրագրող Հասմիկ Համբարձումյանի նախաձեռնությամբ էր, որոնք Վանի հյուրանոցում մեխեցինք ու խաչ դարձրինք:

Ահա այդ խաչերը մեր խմբի չորս լրագրողներով («**Ազգի**», «Առավոտի», «Պանորամայի» լրագրողներն ու Երեւանի մամուլի ակումբի ներկայացուցիչը), մեզ միացավ նաեւ մի ֆրանսահայ լրագրող, պատարագի մեծ մասի ընթացքում բարձր պահեցինք, որպես խաչը եկեղեցու գմբեթին չտեղադրելու թուրքական խայտառակ որոշման դատապարտում, ինչը շատ հեռուստաընկերություններ ֆիքսեցին, շատերն էլ հարցրեցին մեր ակցիայի նպատակը: Սակայն չի կարելի ասել, որ հայ ուխտավորներից բոլորն էին բողոքն ընդունելի համարում: Մի քանի կարծիքի ներկայացումը գուցե տա համայնապատկերը սեպտեմբերի 19-ին Ս. Խաչի պատարագին եկած ուխտավորների կարծիքների:

## Ուխտավորների հայացքով

Գերմանիայից եկած **Թագուհի Մանուկյանը** ծնունդով պոլսեցի է, հատուկ եկել էր սեպտեմբերի 19-ի պատարագին, եւ մեր դիտարկմանը, թե եկեղեցու ոգին խաչն է եւ այն գմբեթին չի իշխում, պատասխանեց. «Անշուշտ կփափագեի, որ խաչը ճիշտ իր տեղն ըլլար, բայց կառավարությունը միտքը ծռեր է: Ինչ ընենք` կկարծեմ, որ ոգին ազգն է, հավատացյալ ժողովուրդն է եկեղեցիի ոգին»: Ըստ նրա` պատարագի բոյկոտումը ե՛ւ Սփյուռքի, ե՛ւ Հայաստանի կողմից սխալ որոշում էր:

Մուշ քաղաքից երկու կիլոմետր հեռավորության վրա գտնվող Մոնգոգ գյուղից եկած մի գերդաստան խաղող էր բաժանում ուխտավորներին` պնդելով, որ խաղողը հարյուր տարի առաջ հայերի աճեցրած վազերի մշտական նորոգված այգիների խաղողն է: Նրանք ասում էին, որ երազել են այս օրը, հարյուր տարի լռած պատարագի նորոգումը:

**Հայկ Փալանդյանը,** որ Հոլանդիայից էր եկել, ծագումով Տիգրանակերտցի էր, 1970-ական թվականներին է Տիգրանակերտից Հոլանդիա գնացել: Յոթ ստամբուլահայերի հետ էր եկել, ասում էր, որ «Ալ Ջազիրային» հարցազրույց է տվել ու բողոքել խաչը չդնելու դեմ:

Օսմանացած հայերը, որոնք Թուրքիայում ըստ տարբեր տվյալների 5 մլն են, բավական շատ էին եկեղեցու բակում. Ստամբուլում ապրող, արմատներով սասունցի, տավրիկցի Գեվորգ Չալըշը (քիչ էր մնում Գեւորգ Չաուշ լիներ) Բաղեշի Մուտըկ գյուղից, մուսուլման հայ, յոթանասունամյա Ֆարսանդայի հետ էր. վերջինս մուսուլման ծնվել էր, քանի որ Եղեռնից մազապուրծ իր պապին քրդերն են պահել, հետո մուսուլման դարձրել, դրանից հետո գերդաստանում բոլոր ծնվողներն արդեն մուսուլման էին: Բայց նրա ողջ գերդաստանը գիտե, որ արմատով հայեր են: Եկել էր Աղթամար` ուխտի, մտածում էր, որ Թալինի շրջանի Դավթաշենում ապրող, Եղեռնից մազապուրծ իր ազգականների ժառանգները եւս կգան պատարագին եւ հույսով փնտրում էր նրանց:

«Մարմարա» օրաթերթի փոխխմբագիր **Մաքրուհի Հակոբյանը** եղել էր հին քաղաքում (հին Վանում) եւ սրտի ցավով նկարագրում էր. ամբողջը փլատակ էր` վանքերը, տները քարուքանդ, գետնին լցված, տների հիմքերն են մնացել, մարդու շունչ չկա, միայն հայատառ խաչքարերի բեկորներն են պատմում հայերի մասին: Վարագավանքի մուտքի քանդակը կար, ներսի որմնանկարները կիսափչացած, բայց դեռ կյանք ունեին, ուխտավոր հայերը տերողորմյա էին երգում այնտեղ: Այսպիսի տխուր պատկեր գծելով հանդերձ` օրիորդ Մաքրուհին ասում էր, թե լավ կլիներ, որ մեր երկու կաթողիկոսները գային ու «իրենց պատկառանքով եկեղեցիին առջեւ կենային», որովհետեւ այս եկեղեցին էլ ավերակի կվերածվեր: Երբ հակադրվեցինք, թե գալ, կնշանակեր ջուր լցնել իրենց արածն անող թուրքերի ջրաղացին, օրիորդ Մաքրուհին ինքն էլ հակադարձեց. «Մենք աստեղ շատ լավ հայեր ենք` մեր լեզուն ալ կխոսինք, մեր մշակույթն ալ կզարգացնենք, բայց հոս ծնած-մեծացած ենք, շատ մը հայաստանցիներեն մենք շատ ավելի հայ ենք», մի տեսակ նեղացած ասաց նա:

Մայր աթոռի քայլերն արդարացված էր համարում «Ժամանակ» օրաթերթի խմբագիր Արա Քոչունյանը, ով ավելի վաղ լրագրողներիս հետ հանդիպման ժամանակ նկատեց, թե Մայր Աթոռի բացակայությունը կանխավ ձախողման նշանակություն է հաղորդում տեղի ունեցողին. «համայն հայության խղճին ուղղված մի քայլ նկատելը հեռու է առանց խաչ պատարագը», ըստ նրա, եւ Մայր աթոռը համայն հայության զգայնությունները հաշվի առնելով է գործում, քանի որ խաչի բացակայությունը հոգեւոր արարողության պարգեւած հոգեւոր հրճվանքը կիսատ է թողնում:

*Ափսոս, այստեղ ընդհատում ենք մեր պատմությունը, բայց մեր այցելությունը շատ սնունդ ունի, հուսով ենք դեռ կիսել ընթերցողի հետ:*

ԱԴՐԲԵՋԱՆ

# Ո՞վ է պատգամավոր դառնալու

## *Առաջադրվել է նաեւ առաջին տիկինը*

Անցյալ շաբաթավերջին Ադրբեջանում իշխող կուսակցությունը հրապարակել է խորհրդարանական ընտրություններում երաշխավորված թեկնածուների ցուցակը:

Դիտորդները այն տարբեր կերպ են մեկնաբանում: Ըստ հրապարակվածի՝ ընտրացուցակը մեծ մասով թարմացված է: Նրանում գործող խորհրդարանի մի շարք պատգամավորներ ընդգրկված չեն: Այդուհանդերձ, թեկնածու է առաջադրվել նաեւ առաջին տիկին Մեհրիբան Ալիեւան:

Ամենայն հավանականությամբ, ժողովրդական ընտրյալի կարգավիճակը կպահպանի նաեւ Ջալալ Ալիեւը՝ նախագահի հարազատ հորեղբայրը: Ավելի վաղ մեկնաբանները հակված էին ենթադրելու, որ նրան քաղաքականությունից վերջնականապես հեռացնելու որոշում է ընդունվել:

Մասնավորապես խոսվում էր, որ Ջալալ Ալիեւը սերտ կապեր է ունեցել պետական հեղաշրջման մեջ մեղադրված եւ ներկայումս իրենց պատիժը կրող առողջապահության եւ տնտեսական զարգացման նախարարների հետ: Կարծիք կա, որ նա փորձել է իշխանությունը խլել Իլհամ Ալիեւից՝ համարելով, որ վերջինս չափազանց անփորձ է, որպեսզի կարողանա արդյունավետ կառավարել եւ պահպանել կլանի շահերը:

Պատգամավորության թեկնածուների շարքում է նաեւ նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիեւի փեսան, որն ունի Իլհամ Ալիեւ անուն-ազգանունը: Մինչ այժմ նա աներոջ ենթակայության տակ համարվում է «հարավային շրջանների կուրատոր»:

Մանդատը կպահպանի նաեւ Սամադ Սեիդովը, որը ԵԽ ԽՎ-ում գլխավորում է ադրբեջանական պատվիրակությունը: Պատգամավոր կընտրվի նաեւ Նախիջեւանի «փոխարքա» Վասիֆ Թալիբովը, ինչպես նաեւ՝ Սիավուշ Նովրուզովը, որը իշխող կլանի մերձավորագույն մարդկանցից մեկն է համարվում դեռեւս Հեյդար Ալիեւի ժամանակներից:

Գրեթե կասկած չի հարուցում գործող խորհրդարանի խոսնակ Օքթայ Ասադովի եւ Բահար Մուրադովայի վերընտրվելը: Իսկ ահա Գյուլթեքին Հաջիբեյլիի հարցում առկա է մեծ անորոշություն: Պաշտոնապես հրապարակված ընտրացուցակում նրա անունը չկա:

Ոչ իշխանամետ աղբյուրները մինչդեռ պնդում են, որ Հաջիբեյլին պատգամավոր կընտրվի Գյորանբոյ-Նավթալան ընտրատարածքից, չնայած տեղի գործադիր իշխանության ղեկավարի հետ ունի սկզբունքային տարաձայնություններ:

Նույն աղբյուրների վկայությամբ, խորհրդարանում ապահովված է նաեւ հայտնի երգչուհի Զեյնաբ Խանլարովայի եւ ակադեմիկոս Զիադ Սամեդզադեի տեղը: Ավելի վաղ վերջինս ասել էր, որ «տարիքի բերումով չի առաջադրվի»:

Իշխանությունը ստիպված է եղել այդ զիջումն անել, քանի որ հակառակ դեպքում արդարացված չէր լինի 83- ամյա Ջալալ Ալիեւի պատգամավորությունը: Այսպես են իրենց եզրահանգումը հիմնավորում ադրբեջանական մեկնաբանները: Թեեւ այդ դեպքում ինչու՞ մեծահոգություն չի արվել Վագիֆ Սամեդօղլուի հանդեպ, որը իրենով «մարմնավորում է» հորը՝ Ադրբեջանում դասական համարվող բանաստեղծ Սամեդ Վուրղունին:

Պատճառն, ըստ երեւույթին, այն է, որ Զիադ Սամեդզադեն տարիներ ի վեր Հեյդար Ալիեւի ենթակայության տակ է աշխատել՝ որպես կոմկուսի կենտկոմի քարտուղար, եւ վերահսկել է տնտեսական համակարգը:

Ադրբեջանական մեկնաբանները ընդգծում են, որ կառավարվող «ընդդիմության» մի քանի դեմքեր նույնպես պաշտպանվում են իշխանության կողմից: Այս առումով հատկապես ցայտուն է պատկերվում Ասիմ Մոլլազադեի օրինակը: Վերջինս երեք գումարումների պատգամավոր է եւ չորրորդ անգամ ընտրվելու հնարավորություն է ստացել:

Այս ամբողջ «խառնաշփոթի» մեջ էականն այն է, որ իշխող կուսակցության ներսում առաջացել են մի քանի խմբավորումներ, որոնք մրցակցում են: Ադրբեջանական վերլուծաբանները մատնանշում են ուժի հետեւյալ կենտրոնները՝ նախագահական զույգ, աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիեւ, անվտանգության ծառայության պետ Բայլար Էյուբով, արտակարգ իրավիճակների նախարար Քյամալեդդին Հեյդարով եւ տրանսպորտի նախարար Զիա Մամեդով:

Ըստ այդմ, ուժային կենտրոն չեն գնահատվում պաշտպանության եւ ՆԳ նախարարներ Սաֆար Աբիեւը եւ Ռամիլ Ուսուբովը: Ենթադրվում է, որ վերջիններիս ազդեցությունը սահմանափակված է ղեկավարած գերատեսչություններով, եւ նրանց արտոնված չէ ունենալ քաղաքական հավակնություններ:

Նշանակու՞մ է արդյոք, որ ընտրություններից հետո հնարավոր է երկու ուժայինների պաշտոնանկություն: Ըստ շրջանառվող լուրերի, Աբիեւի հրաժարականի թեման գտնվում է ռուս- ադրբեջանական ռազմական համագործակցության հարթությունում:

Աբիեւը Մոսկվայում ունի «երդվյալ արեւմտամետի» համարում: Ինչ վերաբերում է ՆԳ նախարար Ուսուբովին, ապա ադրբեջանական մեկնաբաններից մեկը հիշեցնում է Հեյդար Ալիեւի խոսքը. «Քանի ես կամ, Ռամիլը կմնա»,- եւ ավելացնում. «Յոթ տարի է, ինչ Հեյդար Ալիեւը չկա, բայց Ուսուբովը ՆԳ նախարար է»:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ
Ստեփանակերտ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՐԵԱ

# ԿԺԴՀ կուսակցական նոր ղեկավարությունը կընտրվի սեպտեմբերի 28-ին

**Փհենյանում սեպտեմբերի 28-ին ընտրվելու է ԿԺԴՀ Աշխատանքային կուսակցության նոր ղեկավարություն: Սեպտեմբերի 21-ին նման հայտարարություն է տարածել հյուսիսկորեական պետական լրատվական գործակալությունը՝ չնշելով այլ մանրամասնություններ:**

**Ավելի վաղ հարավկորեական եւ արեւմտյան աղբյուրները ենթադրություն էին արել, որ ԿԺԴՀ-ում իշխանությունը շուտով Կիմ Չեն Իրից անցնելու է նրա կրտսեր որդի Կիմ Չեն Ունին:**

**Սպասվում էր, որ Կիմ Չեն Ունը հոր իրավահաջորդը կդառնա սեպտեմբերի առաջին կեսին նախատեսված Կենտկոմի քաղբյուրոյի հանդիպման ժամանակ, բայց հանդիպումն այդպես էլ չկայացավ: 1980-ին կայացած նախորդ համանման հանդիպման ժամանակ Կիմ Չեն Իրը նշանակվել էր հոր՝ ԿԺԴՀ հիմնադիր Կիմ Իր Սենի իրավահաջորդ:**

**Սեպտեմբերի 18-ին հայտնի դարձավ, որ ամսվա առաջին տասնօրյակում Չինաստան կատարած այցելության ընթացքում Կիմ Չեն Իրը «Արեւմուտքի ստահոդ լուրեր» է անվանել մոտալուտ իշխանափոխության հետ կապված հաղորդումները:**

**Կիմ Չեն Իրը ԿԺԴՀ Աշխատանքային կուսակցության գլխավոր քարտուղարն է: Նրա կրտսեր որդին եւ հավանական իրավահաջորդը զբաղեցնու՞մ է արդյոք որեւէ պաշտոն երկրի միակ կուսակցության ղեկավարությունում. այդ մասին ոչինչ հայտնի չէ, նշում է Ֆրանսպրես գործակալությունը:**

# Իսրայելցուն հող վաճառելու դեպքում պաղեստինցին ենթակա է մահապատժի

**Պաղեստինյան ինքնավարության գերագույն դատարանը հաստատել է մի օրինագիծ, ըստ որի իսրայելցիներին հող վաճառած պաղեստինցին կարող է դատապարտվել մահապատժի: Այդ մասին հաղորդում է պաղեստինյան MAAN լրատվական գործակալությունը:**

**Մինչեւ վերջերս Պաղեստինի օրենսդրությունը նման վաճառքը համարում էր «փոքր իրավախախտում», սակայն գլխավոր դատախազ Ահմեդ ալ Մուղնին գանգատարկմամբ դիմեց գերագույն դատարան, պնդելով, որ դա ծանր հանցանք է, որը ենթադրում է առավելագույն պատժաչափ:**

**Գերագույն դատարանը գանգատարկումից հետո վճռեց, որ օտարերկրացիներին եւ մասնավորապես հրեաներին հող վաճառելը կամ վաճառքի փորձը ներհակ է պաղեստինցիների ազգային շահերին, խոչընդոտում է պաղեստինյան անկախ պետության ստեղծմանը եւ ենթակա է մահապատժի:**

**Ի դեպ, Հորդանանի տարածքում 1948-1967 թթ. գործում էր համանման օրենք, որը կոչվում էր «Թշնամիներին անշարժ կայք վաճառելուն խանգարող օրենք»:**

**Ըստ 1973 թ. օրենքի՝ հրեաներին կամ իսրայելցիներին սեփականության վաճառելը գնահատվում էր որպես պաղեստինցիների անվտանգության եւ բարեկեցության դեմ ուղղված հանցագործություն եւ պատժվում էր մեղադրյալի մահվամբ եւ ունեցվածքի բռնագրավմամբ:**

**Ավելի ուշ պաղեստինցիները ձեւափոխեցին հորդանանյան օրենքը՝ այն անվանելով «գույքային օրենք օտարերկրացիների համար», որի շրջանակներում «օկուպանտներին» հող վաճառելը համարվում էր պետական դավաճանություն: Ու թեեւ Պաղեստինյան ինքնավարության իշխանությունները մահապատժի չէին ենթարկում մեղավորներին, հայրենակիցները հաճախ նրանց սպանում էին առանց դատ ու դատաստանի:**

# Պապին ողջունում էին հազարավոր մարդիկ, մեծ էր նաեւ նրան քննադատողների թիվը

Պապ Բենեդիկտոս 16-րդի 4-օրյա այցը Միացյալ Թագավորություն ի սկզբանե «պատմական» որակվեց: Օրեր շարունակ լրատվության բոլոր միջոցների գլխավոր եւ հիմնական նորությունը պապի այցելությունն էր: Պապն այստեղ է «դարմանելու վերքերը», «պահպանելու Սուրբ ծնունդը», «կոչ անելու համագործակցության» եւ «հիշեցնելու հավատի ազատության մասին». սրանք մամուլում տպագրված վերնագրերից մի քանիսն են միայն:

Լոնդոնյան հուշանվերների խանութները պապի այցելության օրերին լի էին Բենեդիկտոս 16-րդի դիմանկարով բաժակներով, ափսեներով եւ անգամ թեյի տուփերով: Մետրոյի կայաններում հայտարարություններ էին փակցվել, թե պապի այցելության առնչությամբ որ կայանները ժամանակավորապես չեն աշխատի: Լրագրողները հատուկ ռեպորտաժներ էին պատրաստել պապի անվտանգությունն ապահովելուն ուղղված միջոցառումների մասին:

Այցելության երկրորդ օրն արդեն ոստիկանությունը ձերբակալեց 6 մարդու՝ նրանց մեղադրելով կազմակերպվող ահաբեկչության մեջ: Պարզ դարձավ, որ վեցն էլ ալժիրցի էին եւ աշխատում էին փողոցների մաքրությունն ապահովող ընկերություններից մեկում: Այս առթիվ շտապեց հայտարարությամբ հանդես գալ պապի մամլո խոսնակը՝ նշելով, որ պապին այս միջադեպը չի անհանգստացրել եւ որեւէ փոփոխություն ծրագրում չի լինելու:



Էդինբուրգում եւ Գլազգոյում մեկ օր անցկացնելուց հետո պապը ժամանեց Լոնդոն: Բենեդիկտոս 16-րդն այցելեց Սուրբ Մարի համալսարան-քոլեջ եւ հանդիպեց ավելի քան 3000 աշակերտների եւ ուսանողների հետ՝ այսպիսով ընդգծելով կաթոլիկ կրթության կարեւորությունը: Պապին դիմավորեցին հարյուրավոր ոգեւորված քաղաքացիներ: Նրանց կողքին, սակայն, հանդես եկան ցուցարարները՝ իրենց բողոքն արտահայտելով, որ պապն իր ձայնը չէր բարձրացրել երեխաների հանդեպ սեռական ոտնձգությունների փաստի առնչությամբ: Նրանք այստեղ էին եկել պապի հրաժարականը պահանջող ցուցանակներով:

Այստեղ ելույթ ունենալով հասարակության առջեւ՝ պապը սահմանափակվեց նշելով, որ բոլորիս պարտքն է երեխաների համար անվտանգ եւ արդյունավետ կրթական միջավայր ապահովելը:

Բրիտանացիների մտահոգությունները միայն երեխաների խնդիրներով չէին ավարտվում: Հատուկ պապի այցելության առնչությամբ հրատարակված թերթերի քննարկման հիմնական թեման կաթոլիկ եւ անգլիկան եկեղեցիների համագործակցությունն էր եւ կաթոլիկ աշխարհի ազդեցությունը: Երբ պապը Վեստմինստերում հանդիպում էր Քենտրբերիի արքեպիսկոպոսի հետ, դրսում ժամեր շարունակ նրա դուրս գալուն էին սպասում ոչ միայն նրան հեռվից ողջունելու ցանկություն ունեցող հարյուրավոր մարդիկ, այլեւ նրանք, ովքեր դեմ էին պապի այցելությանը: Վերջիններիս մտահոգությունը մեկն էր. պապի այցելությունը կարող է մեծացնել կաթոլիկ աշխարհի ազդեցությունը Մեծ Բրիտանիայում:

Արքեպիսկոպոսի հետ պապի հանդիպման ընթացքում ոստիկանները փակել էին խորհրդարանին եւ եկեղեցուն հարող փողոցները: Աշխարհի բազմաթիվ երկրներից ժամանած լրագրողների համար Լոնդոնի այս հատվածում հատուկ բեմ էր պատրաստվել, որտեղից նրանք կարող էին հետեւել եւ նկարահանել պապի մուտքը եկեղեցի: Այստեղ էին նաեւ անգլիկան եկեղեցու հոգեւորականները, որոնցից մի քանիսը ելույթ էին ունենում հավաքված մարդկանց համար, թեպետ նրանց լսելու ցանկություն ունեցողների թիվն այնքան էլ մեծ չէր: Պապին ողջունելու համար դեղին եզրերով հատուկ դրոշակներ էին արտադրվել: Շատերն էին դրանք գնում հետագայում որպես հուշանվեր պահպանելու նպատակով: «Պապին տեսնելու համար կարող եմ ժամեր շարունակ սպասել: Սա իսկապես մեծ իրադարձություն է ինձ համար», նշեց երիտասարդ մի կին:

Անգամ ուշ երեկոյան, երբ ավարտվել էին բոլոր հանդիպումները, եւ պապը Վիբըլդոնի նստավայրում հանգստանում էր, շարունակվում էր մարդկանց հոսքը դեպի նստավայրը: Այստեղ էին նաեւ լրագրողները: Օրվա հերթական նորությունը նստավայրի այգում պապի զբոսանքն էր, որն անմիջապես հեռարձակվեց լուրերի թողարկումներում: «Անգամ ուշ երեկոյան պապը դուրս է եկել աղոթելու մեզ համար», հայտարարեցին եւ տարածեցին լրագրողները:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ
Լոնդոն-Երեւան

# Իրաքի թանգարաններից կորած իրերը գտել են վարչապետի մոտ

**Իրաքի թանգարաններից կորած համարվող մշակութային արժեքները հայտնաբերվել են երկրի վարչապետ Նուրի ալ Մալիքիի աշխատավայրում: Այդ մասին հաղորդում է BBC գործակալությունը:**

**Ազգային թանգարանի հավաքածուի 638 ցուցանմուշ պարունակող ստվարաթղթե տուփերը գտել են վարչապետի գրասենյակի մոտ՝ խոհանոցային պարագաների պահեստում:**

**Երկրի զբոսաշրջության նախարարության տվյալներով, որին ենթակա են թանգարանները, հայտնաբերված ցուցանմուշները դեռ 2009-ի սկզբներին ԱՄՆ իշխանությունները վերադարձրել էին Իրաքին: Հայտնի էր, որ հավաքածուն բերվել է Իրաքի տարածք, բայց հետո հետքերը կորել են: Զբոսաշրջության նախարար Քահտան ալ Ջուբուրին լրագրողների հետ զրուցելիս հավաքածուի «անհետացումը» բացատրել է երկրի իշխանություններին դրա փոխանցման «սխալ արարողակարգով»:**

**Նուրի ալ Մալիքիի գրասենյակում հայտնաբերված առարկաները, այդ թվում՝ կավե սալիկները, բրոնզե իրերը եւ ոսկեղենը, արդեն հանձնվել են Իրաքի Ազգային թանգարանին:**

**2003-ի առաջին կիսամյակում՝ ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների ռազմարշավի ակտիվ փուլի ընթացքում Իրաքի թանգարաններից անհետացել էին հազարավոր ցուցանմուշներ: Իրաքից դուրս բերված մշակութային արժեքների մի մասը վերջին տարիներին հաջողվել է գտնել եւ վերադարձնել:**

## «Գոհար» համույթը մեկնեց Լիբանան



Համահայկական հյուրախաղերով հանրածանոթ «Գոհար» համույթը, գլխավորությամբ մաեստրո Սեպուհ Աբգարյանի, ուրբաթ օրը չարտերային օդանավով Երեւանից մեկնեց Բեյրութ՝ համերգների: Շուրջ 167 հոգանոց խումբը, որի կազմում են նվագախումբը, երգչախումբը, պարախումբը եւ սոլիստներ, սեպտեմբերի 24-ին, 25-ին եւ 26-ին համերգներ կտա Լիբանանի մայրաքաղաքի մոտ գտնվող Զուք Միխայել ծովեզերյա հռոմեական ամֆիթատրոնի բեմի վրա, որն այս առթիվ արտաքինից վերաձեւավորված կլինի Կիլիկիայի նշանավոր բերդերից Լամպրոնի ճարտարապետական տեսքով, վերարտադրելու համար հայկական 400-ամյա այդ թագավորության փառքը:

Ըստ **«Ազգի»** ստացած տեղեկությունների, համերգաշարը իրադարձություն կլինի ոչ միայն լիբանանահայության, այլեւ հարեւան՝ Կիպրոսի, Սիրիայի, Հորդանանի ու Եգիպտոսի հայության համար, քանզի բազմաթիվ տոմսակներ ապահովվել են նաեւ այդ երկրներից, մինչ տոմսարկղերում անշլագ է արդեն: Հարութ, Շահե եւ Նար Խաչատուրյան եղբայրների՝ իրենց մոր՝ տիկին Գոհարի ի պատիվ կազմած համույթը վերջին տասնամյակում բազմաթիվ համերգներ է տվել Գյումրիում, Երեւանում, Լիբանանում, Սիրիայում, Կիպրոսում, Մ. Նահանգներում եւ անգամ Մոսկվայում, հայ երգով ու պարով խանդավառելով տասնյակ հազարավոր սփյուռքահայերի:

## Հանրապետության դպրոցներն ակտիվորեն ներգրավվել են ռուսական երգի փառատոնում



Օրերս տեղի ունեցավ Հայաստանի հանրակրթական դպրոցներում անցկացվող «Երգը բարեկամության կամուրջ է» ռուսական երգի հանրապետական փառատոնի կազմկոմիտեի հերթական նիստը:

Փառատոնը անցկացվում է «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ եւ «Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության, «Русский мир» հիմնադրամի (Ռուսաստանի Դաշնություն) կողմից, Հայաստանի կրթության եւ գիտության, մշակույթի նախարարությունների, Երեւանի քաղաքապետարանի, Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության աջակցությամբ: Փառատոնը նվիրված է Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 65-ամյակին եւ Ռուսաստանի հայերի միության 10-ամյա հոբելյանին:

Նիստը վարում էր կազմկոմիտեի նախագահ, Ռուսաստանի հայերի միության փոխնախագահ **Վլադիմիր Աղայանը**: Վերջինս կոմիտեի անդամներին ներկայացրեց փառատոնի ընթացքի եւ կատարված աշխատանքների մասին: «Այսօր արդեն քաղաքի եւ մարզերի դպրոցները ոչ միայն տեղեկացված են փառատոնի մասին, այլեւ ակտիվորեն նախապատրաստվում են դպրոցական փուլին, որն ավարտվելու է հոկտեմբերի 10-ին: Մեծ ոգեւորությամբ պիտի նշեմ նաեւ մեզ աջակցող բոլոր կառույցների պատրաստակամ մոտեցման եւ ակտիվ համագործակցության մասին: Անկեղծ ասած, իմ բոլոր սպասելիքները գերազանցվել են», նշեց Վլադիմիր Աղայանը:

Կազմկոմիտեի անդամները քննարկեցին փառատոնի կազմակերպչական հարցեր, ինչպես նաեւ նշեցին փառատոնի ընթացքը հնարավորինս հաճախ լուսաբանելու անհրաժեշտության մասին՝ ելնելով ռուսական լեզվի հանդեպ վերաբերմունքի ու մոտեցման կարեւորությունից:

Ա. Հ.

## «Ճանաչենք Հայաստանը» Սիրահարների այգում

Սեպտեմբերի 20-ից ամեն օր մի խումբ երիտասարդներ Սիրահարների այգում մի ծառից մյուս ծառը ձգվող պարաններից 130 լուսանկարներ են ամրացնում, իսկ երեկոյան ժամը 21.00-ից հետո լուսանկարները հավաքում են: Լուսանկարների հեղինակները «Ճանաչենք Հայաստանը» արշավախմբի անդամներն են: Ցուցահանդեսը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության անկախության 19-րդ տարեդարձի առթիվ: 22-ամյա **Գեւորգ Ստեփանոսյանը** «Ճանաչենք Հայաստանը» արշավների ակումբի կազմակերպիչ անդամներից է: Նրա փոխանցմամբ՝ «Ճանաչենք Հայաստանը» երիտասարդ առաջնորդների դպրոցի ծրագրերից է: Ցուցահանդեսի նպատակն է մարդկանց ծանոթացնել Հայաստանի տարբեր մարզերի բնությանն ու ճարտարապետական նմուշներին: «Մեր ցուցահանդեսն ուղղված է հայրենաճանաչ հասարակություն ձեւավորելուն», ավելացրեց Գեւորգ Ստեփանոսյանը: Սիրահարների այգում ցուցահանդես բացելու համար արշավախմբի երիտասարդները դիմել են Երեւանի քաղաքապետարանին ու այգու տնօրենությանը, որոնք էլ սիրով աջակցել են նրանց:

Խմբի անդամներից **Սարգիս Բաշիկյանը** պատմեց, որ ցուցահանդեսի այցելուների մեջ եղել են մարդիկ, որոնք ցանկություն են հայտնել գնելու լուսանկարները: «Մենք լուսանկարները չենք վաճառում, սա ցուցահանդես-վաճառք չէ», հավելեց Սարգիսը: Նրա խոսքով՝ ցուցահանդեսին շատ լավ արձագանքում են նաեւ մեծահասակները. «Օրինակ՝ ասում են. «Ինչ լավ է, որ հայրենասեր երիտասարդներ կան»: Ցուցահանդեսը բաց է լինելու մինչեւ ամսի 22-ը: Գեւորգը տեղեկացրեց, որ այս տարի «Ճանաչենք Հայաստանը. Ալավերդին» եւ «Ճանաչենք Հայաստանը. Արցախը» խորագրերով եւս 2 ցուցահանդեսներ են ունեցել: 22-ամյա **Արփինեն** քայլելիս է եղել Բաղրամյան պողոտայով, երբ տեսել է այգում ամրացված լուսանկարները: «Ինձ հետաքրքրեց, թե ինչ լուսանկարներ են: Հայաստանի տեսարժան վայրերում բազմիցս եմ եղել, հետեւաբար այս նկարներն իմ համար նորություն չեն, բայց ինչքան մարդիկ կան, որ այդ վայրերի մասին պատկերացում չունեն: Արշավախմբի մտահղացումն ինձ է դուր գալիս», ասաց Արփինեն:





Արշավախումբը 40-ից ավելի հիմնական անդամներ ունի: Օգոստոսի 1-ին նրանք հաղթահարել են նաեւ Արագածի գագաթը: «Այս ցուցահանդեսն արշավների ծրագրի ամփոփիչ մասն է: Արդեն 15 արշավների ենք գնացել, որոնց ընթացքում կատարել ենք նաեւ տարածքների մաքրման աշխատանքներ», ասաց Գեւորգը, ապա հավելեց, որ ակումբը զբոսաշրջային գործունեությամբ չի զբաղվում:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## «Բամբիռը» կներկայացնի Հայաստանը Euro Voice-ում



Orange-ի աջակցությամբ «Բամբիռ» ռոք խումբը կմեկնի Աթենք՝ մասնակցելու սեպտեմբերի 23-ին եւ 24-ին Օլիմպիական ստադիոնում կայանալիք Euro Voice երաժշտական հեռուստամրցույթին: «Բամբիռն» ընտրվել է ինտերնետային քվեարկությամբ, իսկ մրցույթին խումբը կներկայացնի That is fine with us երգը: Երգի պրեմիերան, ի դեպ, տեղի ունեցավ երեկ Orange-ի գլխավոր խանութում կազմակերպված ասուլիսի ժամանակ: Իսկ Orange-ի գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան** նշեց. «Լինելով Հայաստանի տնտեսական եւ հասարակական կյանքում ակտիվ դերակատարում ունեցող ընկերություն՝ մենք չէինք կարող չմասնակցել նաեւ երկրի մշակութային կյանքին: Որպես եվրոպական օպերատոր՝ մենք ուրախ ենք աջակցել Հայաստանի շնորհալի երաժիշտներին՝ մասնակցելու համաեվրոպական միջոցառումներին, որոնք թույլ կտան նրանց ոչ միայն բացահայտել իրենց հնարավորությունները, այլեւ ներկայացնել Հայաստանը եվրոպական բեմում: Հաջողություն եմ մաղթում այս երիտասարդներին. նրանք իսկապես հաջողության հասնելու մեծ հնարավորություն ունեն»:

Հավելենք նաեւ, որ համացանցում այս պահին «Բամբիռի» կատարումը լսողների քանակով առաջինն է՝ 26 015 լսում:

Հ. Ա.

## Հայ լուսանկարիչը հաղթել է միջազգային հեղինակավոր ֆոտոմրցույթում

Լուսանկարիչ Աշոտ Պողոսյանի «Երազանքի րոպե» լուսանկարը սեպտեմբերի 21-ին հաղթող է ճանաչվել Չեխիայում անցկացված «Խաղաղության պահեր» միջազգային ֆոտոմրցույթի «Մարդիկ» անվանակարգում: Մրցույթն անց է կացրել Տեղեկատվական խաղաղության միջազգային կենտրոնը՝ Խաղաղության միջազգային օրվա առթիվ: Ընդհանուր առմամբ ֆոտոմրցույթի «Մարդիկ» անվանակարգում հաղթելու հավակնություն ուներ 2594 լուսանկար աշխարհի 34 երկրներից:

Հիշեցնենք, որ 1982 թվականին ՄԱԿ-ի որոշմամբ սեպտեմբերի 21-ը հռչակվել էր Խաղաղության միջազգային օր:

Աշոտ Պողոսյանը (ծնվ. 1989 թ.) սկսել է լուսանկարել պատանեկության տարիներից եւ մասնակցել է մի շարք հեղինակավոր միջազգային լուսանկարչական մրցույթների, որոնց թվում են World Press Photo-ն եւ World Photo View-ն:

ՌՈՒԲԵՆ ԲԱՂԴԻՇՅԱՆ
Լուսանկարիչ

## Չախողված կինոդիտում

Վերջերս որոշեցի գնալ «Նաիրի» կինոթատրոն՝ ֆիլմ դիտելու: Մոտենալով կինոթատրոնի շենքին՝ նկատեցի առաջին թերությունը. կառույցի վրա նույնիսկ նրա անունը գրված չէ: Սակայն դա կարելի է խորամանկ քայլ համարել. զբոսաշրջիկները չեն գտնի այն, չեն մտնի ու մեր երկրի մասին վատ կարծիք չեն կազմի: Չէ՞ որ երբեմն ֆիլմերը լինում են վատ որակի, իսկ վերջում ինչ-որ մեկն ասում է. «Ֆիլմը հնչյունավորեցին Վասյան եւ Կասյան՝ հատուկ interfilm.ru կայքի համար»:

Այնուհետեւ, մինչեւ 2-րդ հարկ բարձրանալն առաստաղից հասցրեց գլխիս անձրեւ տեղալ: Հատակին թափվող ջրի կաթիլները չնկատելու դեպքում հեշտությամբ կարելի էր սայթաքել ու ընկնել ամենավտանգավոր տեղից՝ աստիճանների վերին ծայրից:

Մոտեցա տոմսարկղին եւ խնդրեցի 2 տոմս տալ: «Դուք նստեք դահլիճում, իսկ մենք տոմսը կբերենք»,- պատասխանեց աշխատակցուհին: Զարմացած մտա դահլիճ. բոլորովին դատարկ էր, չնայած ֆիլմի ցուցադրությանը 5 րոպե էր մնացել: Երեւի աշխատողները չէին սպասում, որ ինչ-որ մեկը կարող է իրենց մոտ գալ, դրա համար տոմս չէին պատրաստել:

Ֆիլմը սկսվեց: Կա՛մ բարձրախոսներն էին վատ աշխատում, կա՛մ պարզապես ֆիլմն էր անորակ, քանի որ ձայնը մեծ դժվարությամբ էր լսվում: Դրան գումարվեց աշխատակցուհու հեռախոսազանգը. նա այնքան բարձր էր խոսում, որ չէինք հասկանում, թե ով է խոսում՝ նա՞, թե՞ հնչյունավորողը:

Վերջում գնացինք դեպի ելքը, բայց բոլոր դռները փակ էին: «Քիլլերները» կոչվող ֆիլմը դիտելուց հետո նույնիսկ փոքր-ինչ վախենալու էր այնտեղ գտնվելը: Ստիպված էինք վերադառնալ ու դուրս գալ գլխավոր մուտքից: Ոչինչ, այդ պահին կարեւորը դուրս գալն էր:

ԱԼԼԱ ԻԳԻԹՅԱՆ

# Հաղթական մեկնարկ




Հայաստանի տղամարդկանց եւ կանանց հավաքականները հաղթանակով մեկնարկեցին Խանտի Մանսիյսկում երեկ սկսված շախմատի համաշխարհային 39-րդ օլիմպիադայում: Տղամարդկանց հավաքականը 3-1 հաշվով պարտության մատնեց Կոստա Ռիկայի շախմատիստներին, իսկ հայ շախմատիստուհիները մեծ առավելության հասան թույլ զարգացած երկրների հավաքականի նկատմամբ (3,5-0,5):

Հայաստանի տղամարդկանց հավաքականը մեկնարկում հանդես եկավ առանց իր առաջատար Լեւոն Արոնյանի: Առաջին խաղատախտակի վրա Վլադիմիր Հակոբյանը սեւերով 31-րդ քայլին հաշտություն կնքեց Մաուրիցիո Արիաս Սանտանայի հետ: 2-րդ խաղատախտակի վրա Գաբրիել Սարգսյանը մատի սպառնալիքի տակ ստիպեց հանձնվել սեւերով խաղացող Լեոնարդո Վալդեսին: Առաջինն իր մրցավեճն ավարտեց 3-րդ խաղատախտակի վրա խաղացող Արման Փաշիկյանը՝ արդեն 14-րդ քայլին հաշտություն կնքելով Բեռնալ Գոնսալեսի հետ: Հայաստանի այս տարվա չեմպիոն Ավետիք Գրիգորյանը հաղթական 2-րդ միավորը պարգեւեց՝ պարտության մատնելով Սեբաստիան Ռուիզին:

Մեր շախմատիստուհիների մրցակիցներն իրենց վարկանիշով զգալիորեն զիջում էին Հայաստանի հավաքականի անդամներին: Ամենաբարձր վարկանիշն (2103) ուներ ՖԻԴԵ-ի վարպետ, Ռուսաստանը ներկայացնող Նադեժդա Ջիկինան, որը 2-րդ խաղատախտակի վրա 30-րդ քայլին մատի սպառնալիքի տակ հանձնվեց Լիլիթ Մկրտչյանի հետ պարտիայում: Առաջին խաղատախտակի վրա էլ Էլինա Դանիելյանը հաղթեց հնդիկ շախմատիստուհի Անտո Ջենիտային: Նրա օրինակին հետեւեց նաեւ Լիլիթ Գալոյանը՝ պարտության մատնելով ռուսաստանցի Մարինա Կայդանովիչին: Միակ կես միավորը ռուսաստանցի ՖԻԴԵ-ի վարպետ Գալինա Մելնիկի հետ մրցավեճում մրցակցին զիջեց Նելլի Աղինյանը:

Տղամարդկանց մրցաշարում ուկրաինացիները 4-0 հաշվով ջախջախեցին իրաքցիներին, իսկ ամերիկացիները՝ Ֆարերներին: Սլովակիայի հավաքականը 3,5-0,5 հաշվով հաղթեց Բարբադոսի շախմատիստներին: Առաջին խաղատախտակի վրա Սերգեյ Մովսիսյանը պարտության մատնեց Քեւին Դենիին: Ուժեղագույն մյուս թիմերի մասնակցությամբ հանդիպումների արդյունքներն են. Ռուսաստան-1-Իռլանդիա՝ 3,5-0,5, Չինաստան-Ղրղզստան՝ 3,5-0,5, Հունգարիա-Հորդանան՝ 3,5-0,5, Ադրբեջան-ՀԱՀ՝ 3,5-0,5:

Կանանց մրցաշարում միեւնույն 4-0 հաշվով Ռուսաստանի առաջին հավաքականը հաղթեց Բանգլադեշի թիմին, Չինաստանը՝ Բրազիլիային, Ուկրաինան՝ Բոլիվիային, Վրաստանը՝ Մակեդոնիային, ԱՄՆ-ը՝ Դոմինիկյան Հանրապետության հավաքականին: Ամերիկացիների կազմում 2-րդ խաղատախտակի վրա Տաթեւ Աբրահամյանը հաղթեց Էնայդա Պերեսին:

# Մթնոլորտը շիկանում է

**21-րդ տուրում «Միկայի» եւ «Շիրակի» հաջող ելույթների շնորհիվ աղյուսակի վերին հորիզոնականներում իրավիճակն ավելի խճճվեց՝ սրելով պայքարը մրցանակային տեղերի համար:**

**Գլխավոր անակնկալը մատուցեց առաջնության բացահայտ հետնապահ «Շիրակը»՝ ոչ-ոքի խաղալով առաջատար «Բանանցի» հետ: 63-րդ րոպեին հաշիվը բացեց շիրակցի Անդրանիկ Բարիկյանը՝ խփելով Հայաստանի առաջնություններում «Շիրակի» հոբելյանական՝ 1000-րդ գոլը: Ընդամենը 3 րոպե անց Ջունիոր Խոսե Կառլոսը վերականգնեց հավասարակշռությունը, սակայն ավելին անել «Բանանցին» չհաջողվեց: Այսպիսով, «Բանանցը» շատ կարեւոր 2 միավոր կորցրեց: Իսկ ահա «Փյունիկը» 5-0 հաշվով ջախջախելով «Կիլիկիային», «Բանանցից» միավորների տարբերությունը հասցրեց երեքի: Փյունիկցիներից 2 գոլ խփեց Հովհաննես Գոհարյանը, մեկական գնդակ իրենց օգտին գրանցեցին Գեւորգ Ղազարյանը, Մարկոսը (11 մ) եւ Դավիթ Մանոյանը:**

**Իր հաղթարշավը շարունակեց «Միկան»՝ տոնելով 5-րդ անընդմեջ հաղթանակը: Միկացիները «Ուլիսի» հետ սկզբունքային խաղում հաղթեցին 2-1 հաշվով: Հաշիվը բացեց բրազիլացի Էդիլսոն Ժունիորը, սակայն ընդմիջումից հետո ուլիսցի Շոթա Ջիքիան վերականգնեց հավասարակշռությունը: «Միկային» հաղթանակ պարգեւեց Ալեքսանդր Թադեւոսյանի դիպուկ հարվածը: «Միկան» «Ուլիսից» միավորների տարբերությունը հասցրեց 5-ի՝ սրելով պայքարը բրոնզե մեդալների համար:**

**«Իմպուլս»-«Գանձասար» խաղում գրանցվեց ոչ-ոքի (1-1): Հաշիվը բացեց դիլիջանցի Կարեն Մուրադյանը, 15 րոպե անց աչքի ընկավ գանձասարցի Սարգիս Նասիբյանը:**



**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Բանանց | 21 | 15 | 4 | 2 | 47-19 | 49 |
| 2. Փյունիկ | 21 | 14 | 4 | 3 | 56-18 | 46 |
| 3. Ուլիս | 21 | 13 | 3 | 5 | 32-16 | 42 |
| 4. Միկա | 21 | 11 | 4 | 6 | 32-19 | 37 |
| 5. Իմպուլս | 21 | 6 | 6 | 9 | 18-35 | 24 |
| 6. Գանձասար | 21 | 6 | 2 | 13 | 16-31 | 20 |
| 7. Կիլիկիա | 21 | 4 | 3 | 14 | 18-44 | 15 |
| 8. Շիրակ | 21 | 1 | 2 | 18 | 13-50 | 5 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Գեւորգ Ղազարյան | «Փյունիկ» | 12 |
| Էդուարդո դոս Սանթոս | «Բանանց» | 11 |
| Մարկոս Պիզելի | «Փյունիկ» | 11 |
| Էդնեյ | «Միկա» | 8 |
| Սամվել Մելքոնյան | «Բանանց» | 7 |

# Բետեն մեղադրվում է կեղծարարության մեջ

Ֆուտբոլի Հայաստանի հավաքականի եւ «Փյունիկի» նախկին պաշտպան Ապուլա Բետեն, որ ներկայումս հանդես է գալիս ֆրանսիական ՊՍԺ-ում, մեղադրվում է կեղծարարության մեջ: Կամերունում Բետեին մարզած Նիկոլյա Ֆիլիբերը հայտարարել է, որ Բետեն կեղծել է անձնագրային տվյալները: Ըստ Ֆիլիբերի, նրա իսկական անունը Ամբրուազ Բեյամեն է, իսկ տարիքը ոչ թե 24 է, այլ 29: Արդեն եվրոպական 10 լրատվամիջոցներ նյութեր են հրապարակել Բետեի մասին՝ հաստատելով Ֆիլիբերի բերած փաստերը:

Ներկայումս Ֆրանսիայի համապատասխան մարմինները զբաղվում են Բետեի փաստաթղթերի ստուգմամբ: Եթե հաստատվի, որ ՊՍԺ-ի պաշտպանը կեղծել է անձնագրային տվյալները, ապա նրան բանտարկություն է սպառնում: Բացի այդ, ՊՍԺ-ին հավանաբար տեխնիկական պարտություններ գրանցեն «Սեւիլիայի» հետ Եվրոպայի լիգայի եւ «Առլ Ավինյոնի» հետ Ֆրանսիայի առաջնության հանդիպումներում: Ի դեպ, «Սեւիլիան» արդեն պաշտոնապես դիմել է ՈւԵՖԱ: Բնականաբար, Բետեի ներկայացուցիչները ժխտում են կեղծարարության փաստը:

Ապուլա Բետեն իր պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի կարիերան սկսել է «Փյունիկում» 2002-ին: Ըստ անձնագրի, նա այդ ժամանակ իբր 16 տարեկան էր, թեեւ Հայաստանում էլ շատերը կասկածով էին վերաբերում այդ փաստին: Նա հանդես եկավ նաեւ ՀՀ երիտասարդական եւ ազգային հավաքականում, այնուհետեւ իր մի քանի սեւամորթ թիմակիցների հետ անսպասելիորեն հեռացավ Հայաստանից: Հետագայում նա հայտնվեց Բուխարեստի «Ռապիդում», որտեղից էլ տեղափոխվեց ՊՍԺ:

## Քարամյանները տեղափոխվեցին «Ունիրիա»

**Արման եւ Արտավազդ Քարամյաններին վերջապես հաջողվեց նոր թիմ գտնել: Նրանք ելույթները կշարունակեն ռումինական «Ունիրիա» թիմում: Հիշեցնենք, որ Քարամյանները մինչ այդ խաղում էին Բուխարեստի «Ստյաուայում», որը մարզում էր ՀՀ հավաքականի նախկին գլխավոր մարզիչ Միխայ Ստոյկիցան: Սակայն առաջնության ավարտից հետո «Ստյաուայի» ղեկավարությունը չերկարաձգեց երկվորյակ եղբայրների հետ 6 ամսով կնքած պայմանագիրը: Առաջնության 8-րդ տուրում «Օցելուլի» հետ խաղում Արմանը նշեց նորամուտը «Ունիրիայում»՝ փոխարինման մտնելով 81-րդ րոպեին: «Ունիրիան» 1-4 հաշվով պարտություն կրեց առաջատարից: 8 տուրից հետո «Ունիրիան» 9 միավորով 9-րդ տեղում է:**

## Մխիթարյանն առաջին գոլը խփեց «Շախտյորում»

**Հենրիխ Մխիթարյանը բացեց գոլերի հաշիվը «Շախտյորում»: Ուկրաինայի առաջնության հերթական տուրում նա թիմի մեկնարկային կազմում մասնակցեց Սիմֆերոպոլի «Տավրիայի» հետ ողջ հանդիպմանը եւ 72-րդ րոպեին գեղեցիկ գոլի հեղինակ դարձավ: Դա Հենրիխի 4-րդ գնդակն էր Ուկրաինայի ընթացիկ առաջնությունում: Նախորդ երեքը նա խփել էր Դոնեցկի «Մետալուրգի» կազմում: Դոնեցկի «Շախտյորը» 25 միավորով գլխավորում է աղյուսակը: 2-րդ տեղում 23 միավորով Կիեւի «Դինամոն» է:**

ԶՅՈՒԴՈ

# Երկու մրցանակակիր

**Բուլղարիայում անցկացված ձյուդոյի Եվրոպայի երիտասարդական առաջնությունում հայ ձյուդոյիստները մեկական արծաթե եւ բրոնզե մեդալ նվաճեցին: Առավել հաջողը 55 կգ քաշային Գրիգոր Իվանյանի ելույթն էր, որը դարձավ Եվրոպայի փոխչեմպիոն: Նա հաջորդաբար հաղթեց լյուքսեմբուրգցի Թոմ Սմիթին, իսպանացի Խոակին Գոմիսին ու ֆրանսիացի Մաքսիմ Դուֆոնին եւ մտավ եզրափակիչ: Վճռորոշ գոտեմարտում Գրիգորը զիջեց վրացի Օթար Կայդարաշվիլուն եւ արժանացավ արծաթե մեդալի:**

**Քաշային այս կարգում բրոնզե մեդալակիր դարձավ ռուսաստանցի Արամ Գրիգորյանը, որը վճռորոշ գոտեմարտերում հաղթեց Խոակին Գոմիսին եւ հոլանդացի Յանիկ Կլապրոդին:**

**Հայաստանին երկրորդ մեդալը պարգեւեց 60 կգ քաշային Գոռ Հարությունյանը: Նա B խմբում հաղթեց իր բոլոր մրցակիցներին՝ Էմանուել Բռունոյին (Իտալիա), Եվգենի Վրեմեին (Մոլդովա) եւ լեհ Լուկաշ Կելբասինսկուն: Կիսաեզրափակիչում հայ ձյուդոյիստը պարտվեց ռուսաստանցի Յակուբ Շամիլովին, որը նվաճեց չեմպիոնի տիտղոսը: Գոռը ստիպված էր պայքարել բրոնզե մեդալի համար՝ հաղթելով Բելառուսը ներկայացնող Վահե Թութխալյանին:**

**Մեր մյուս 3 ձյուդոյիստները՝ Գեւորգ Թորոսյանը (66 կգ), Անդրանիկ Չափարյանը (73 կգ) եւ Արթուր Կոռյանը (90 կգ) մեդալների համար պայքարից դուրս մնացին նախնական փուլում: Ընդ որում Չափարյանն ու Կոռյանը մեկական հաղթանակ տոնելով, 2-րդ գոտեմարտում պարտվեցին Եվրոպայի ապագա չեմպիոնին՝ համապատասխանաբար Անդրեաս Ռեգիսին (Իտալիա) եւ ռուսաստանցի Մագոմեդ Մագոմեդովին:**

# Առայժմ առանց մեդալի

**Անթալիայում մեկնարկած ծանրամարտի աշխարհի առաջնությունում հայ ծանրորդներին առայժմ չի հաջողվել մեդալ նվաճել: Մրցապարտեզ դուրս եկած Էլեն Գրիգորյանը (53 կգ) եւ Քրիստինե Պետրոսյանը (63 կգ) հանդես եկան B խմբում եւ ընդհանուր հաշվարկում միջին դիրքեր գրավեցին:**

**Մինչեւ 53 կգ քաշայինների մրցավեճում Էլենը 27 մասնակիցների մեջ երկամարտի 186 կգ (80+106) արդյունքով գրավեց 12-րդ տեղը: Պոկում վարժությունում նա միայն 2-րդ մոտեցմամբ բարձրացրեց 80 կգ-անոց ծանրաձողը, իսկ 3-րդ փորձի ժամանակ ձախողվեց 85 կգ-ը բարձրացնելիս: Ավելի հաջող էր հրում վարժությունը: 103 եւ 106 կգ բարձրացնելուց հետո նա չկարողացավ իրեն ենթարկել 108 կգ-անոց ծանրաձողը:**

**Աշխարհի չեմպիոնուհու տիտղոսը նվաճեց չինացի Չեն Սյաոտինը՝ 222 կգ (100+122): 2-րդ տեղը գրավեց թուրք Այլին Դաստելենը՝ 211 կգ (90+121), բրոնզե մեդալակիր դարձավ Դոմինիկյան Հանրապետության ներկայացուցիչ Յուդերգայ Կոնտրերասը՝ 206 կգ (93+113):**

**Մինչեւ 63 կգ քաշայինների մրցաշարում Քրիստինե Պետրոսյանը երկամարտի 214 կգ (100+114) արդյունքով 30 մասնակիցների մեջ 11-րդն էր: 18-ամյա մարզուհին պոկում վարժությունում 3 մոտեցումներն էլ հաջող կատարեց՝ բարձրացնելով 93, 96 եւ 100 կգ: Իսկ ահա հրում վարժության ժամանակ 114 կգ-ը հաղթահարելուց հետո նա 2 անգամ չկարողացավ բարձրացնել 120 կգ-ը:**

**Քաշային այս կարգում ուժեղագույնը Ղազախստանի ներկայացուցիչ Մայա Մանեզան էր, որը երկամարտում ցույց տվեց 248 կգ (105+143) արդյունք, իսկ հրում վարժությունում աշխարհի նոր ռեկորդ սահմանեց: Արծաթե մեդալը նվաճեց թուրք Սիբել Սիմսեկը՝ 241 կգ (111+130): Բրոնզե մեդալակիր դարձավ չինացի Յուան Ֆան Սյաոն՝ 241 կգ (112+129), որն անձնական քաշով ընդամենը 160 գրամով գերազանցում էր Սիմսեկին:**

**Կանանց մրցաշարում առաջին ոսկե մեդալը բաժին հասավ մինչեւ 48 կգ քաշային, թուրք մարզուհի Նուրկան Թայլանին, որը հաղթեց երկամարտի 214 կգ (93+121) արդյունքով: Ընդ որում հրում վարժության նրա արդյունքն աշխարհի նոր ռեկորդ է: Արծաթե մեդալն էլ նվաճեց թուրք մարզուհին՝ Սիբել Օզկանը՝ 205 կգ (90+115): Բրոնզե մրցանակակիրը չինացի Տյան Յուանն էր՝ 204 կգ (88+116), որը երկամարտում եւ առանձին վարժություններում աշխարհի պատանեկան ռեկորդները թարմացրեց:**

**Մինչեւ 58 կգ քաշայինների մրցավեճում լավագույնը չինացի մարզուհի Դեն Վեյն էր՝ 237 կգ (102+135): Բելառուսցի Նաստասիա Նովիկովան երկամարտի 233 կգ (103+130) արդյունքով նվաճեց արծաթե մեդալ, իսկ բրոնզը բաժին հասավ ԿԺԴՀ-ի ներկայացուցիչ Չուն Մի Չժոնին՝ 230 կգ (100+130):**




**Աշխարհի չեմպիոնուհի Մայա Մանեզա**

**Տղամարդկանց մրցաշարում մինչեւ 56 կգ քաշային կարգում չեմպիոն հռչակվեց չինացի Վու Ցզինբաոն՝ 292 կգ (132+160): Արծաթե մեդալը նվաճեց նրա թիմակից Լոն Ցինգանը՝ 288 կգ (127+161): Բրոնզը բաժին հասավ կորեացի Կում Չոլ Չային՝ 280 կգ (130+150):**

**Մինչեւ 62 կգ քաշային ծանրորդների մրցավեճն ավարտվեց ԿԺԴՀ-ի հավաքականի անդամ Ան Գուկ Կիմի հաղթանակով՝ 320 կգ (147+173): Արծաթե մեդալակիր դարձավ չինացի Չժի Ցզանգը՝ 315 կգ (141+174): 3-րդ տեղը գրավեց թուրք Էրոլ Բիլգինը՝ 314 կգ (143+171):**

**Այսօր ուշ երեկոյան Անթալիայում կսկսվի մինչեւ 69 կգ քաշային կանանց մրցավեճը: Հայաստանի հավաքականի կազմում մրցապարտեզ դուրս կգա Մելինե Դալուզյանը, որից սպասելիքները մեծ են: Հուսանք, որ նա Հայաստանին առաջին մեդալը կպարգեւի:**

# Օլիմպիական ժամացույց Լոնդոնում

Լոնդոնի Տրաֆալգարի հրապարակում բրիտանական իշխանությունները կտեղադրեն 6,5 մետր տրամագծով օլիմպիական ժամացույց: Դրա թվատախտակներից մեկը ցույց կտա, թե որքան ժամանակ է մնացել մինչեւ 2012-ի Լոնդոնի ամառային օլիմպիական խաղերի մեկնարկը, մյուսը՝ պարաօլիմպիադայի մեկնարկը: Օլիմպիական ժամացույցը կգործարկվի 2011-ի մարտի 15-ին՝ 2012-ի ամառային օլիմպիադայից 500 օր առաջ:

---

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Թուրք գրող Դողան Աքհանլիին ուզում են ցմահ ազատազրկել

«Ահեղ դատաստանի դատավորը» ստեղծագործության հեղինակ Դողան Աքհանլիի անունը օգոստոսի կեսից դատավոր, դատաստան բառերի հետ է շրջանառվում: Գերմանական ռադիոն, տպագիր եւ էլեկտրոնային բազմաթիվ լրատվամիջոցներ հակիրճ անդրադառնալով 2001-ից Քյոլնում բնակվող ու Գերմանիայի քաղաքացիություն ունեցող գրողի՝ Ստամբուլի օդանավակայանում ձերբակալությանը, շեշտում են, թե գրողին «պատժում են» հատկապես իր «Ահեղ դատաստանի դատավորը» վեպում Հայոց ցեղասպանությանն անդրադառնալու համար: Աքհանլին օգոստոսի 10-ին առաջին անգամ այցելում է Ստամբուլ՝ տեսակցելու հիվանդ հորը, նրան հենց օդանավակայանում ձերբակալում են: Օգոստոսի 20-ից Ստամբուլից արեւմուտք Թեքիրդաղ մարզի մեկուսարանում գտնվող Աքհանլիին մեղադրում են 1989-ի հոկտեմբերին մահվան ելքով զինված ավազակային մի հարձակման մասնակցության մեջ: Թուրքիայում, ինչպես նաեւ Գերմանիայում գնահատանքի արժանացած գրողը հերքում է իր դեմ ներկայացված բոլոր մեղադրանքները: Դատարանը մերժում է Աքհանլիի ազատ արձակումը, բայց չի էլ որոշել, թե նրա դեմ դատավարություն է սկսելու: Դատախազությունը պահանջում է ցմահ ազատազրկում: Ի պաշտպանություն Աքհանլիի ազատ արձակման Գերմանիայում բողոքի ակցիաներ են կազմակերպվում: Թուրք գրողի ընկեր, գերմանացի հայտնի լրագրող **Գյունտեր Վալլրաֆֆը** քննադատել է. «Թուրքիայի արդարադատության որոշ շրջանակներ վրեժ են լուծում մի անհաճո հեղինակից, որ տարիներ առաջ Հայոց ցեղասպանությունը թեմա է դարձրել»: Վալլրաֆֆը հիմնվում է նաեւ գրողի շահերի պաշտպանի դիտարկմանը, թե վկան հետ է վերցրել ցուցմունքը: «Այս սցենարը ոստիկանությունն է հեղինակել», ասել է փաստաբան **Հայդար Էրոլը**: Ըստ փաստաբանի, դատախազությունը հեգնել է վկայի ցուցմունքները: Recherche International կազմակերպությունը, որին աշխատակցում է Աքհանլին, իր քննադատությունն ուղղում է Գերմանիայի դաշնային կառավարությանը՝ իր պահանջն այսպես ձեւակերպելով՝ «Կառավարությունը բավարար միջոցներ չի ձեռնարկում իր քաղաքացուն ազատելու համար»:

Գերմանացի իրավապաշտպաններ, գերմանահայ ամենատարբեր կազմակերպություններ, ինչպես նաեւ Շվեյցարիա-Հայաստան ընկերակցությունը, բողոքի նամակներ են հղել թուրքական իշխանություններին, մասնավորապես արդարադատության նախարարին՝ Դողան Աքհանլիին ազատ արձակելու խնդրանքով: Հոկտեմբերի 2-ին, ժամը 14.30-16.30-ին Բեռլինում գործունեություն ծավալող ցեղասպանության ճանաչման հանձնախումբը կոչ է անում համախմբվել ու հսկում անցկացնել ԳԴՀ մայրաքաղաքի Ալեքսանդրպլացում՝ «Ազատություն Դողան Աքհանլիին» պաստառներով:

Դողան Աքհանլին ծնվել է 1957-ին: 1980-ի ռազմական պուտչից հետո հայտնվել է ընդհատակում: 1985-87-ին նա Ստամբուլում ձերբակալվել է որպես քաղբանտարկյալ եւ կտտանքների ենթարկվել: 1991-ին փախել է Գերմանիա, ճանաչվել որպես քաղաքական ապաստանյալ, դուրս է եկել Թուրքիայի քաղաքացիությունից, դարձել գերմանահպատակ: 1992-ից ապրում է Քյոլնում: Աքհանլին իր վեպերում, հարցազրույցներում միշտ խոսում է պատմական բռնարարքների եւ մարդու իրավունքների պաշտպանությունից: Աքհանլիի՝ «Հիշողություն, պատասխանատվություն, ապագա» հիմնադրամի կողմից խրախուսվող քաղաքացիական նախաձեռնության մեջ կարեւորագույնը հայերի ցեղասպանության հիշատակումն է եւ հաշտեցմանն ուղղված միջմշակութային երկխոսությունը:

Աքհանլիի վեպերը Թուրքիայում լավագույնների շարքում են նկատվել: 2005-ին հեղինակած «Տիրամոր վերջին երազը» վեպն արժանացել է «Հյուրիեթի» 2009-ի մրցանակին: Վեպը պատմում է 1942-ին 700 հրեա ուղեւորներով Սեւ ծովում խորտակված «Շտուրմա» նավի մասին: Գիրքը 2005-ին թուրք քննադատների եւ գրողների կարծիքով դասվել է 10 լավագույն վեպերի շարքին: 1998-99-ին թուրքերեն լույս է տեսել «Անհետացած ծովերը» ընդհանուր վերնագրով եռագրությունը, որ իր մեջ ներառում է «Ծովին սպասելով» «Կակաչների դաշտը», «Ահեղ դատաստանի դատավորը» ստեղծագործությունները:

Դողան Աքհանլին ակտիվորեն մասնակցում էր Քյոլնի հայ համայնքի կազմակերպած ապրիլի 24-ի հիշատակի միջոցառումներին: Նա եղել է Երեւանում, հանդիպել հայ լրագրողների հետ:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

# ՀԲԸՄ հայկական վիրտուալ համալսարանը ներկայացվեց Սանկտ Պետերբուրգում

**Սեպտեմբերի 19-ին Սանկտ Պետերբուրգի Հայ առաքելական եկեղեցու առաջնորդարանի հանդիսությունների դահլիճում, Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչական ժողովի անդամ դոկտոր Երվանդ Զորյանը հանդիպեց տեղի հայ համայնքի, հայ ուսանողների, ինչպես նաեւ «Նոր սերունդ» եկեղեցասեր երիտասարդների միության հետ, ապա նրանց ներկայացրեց միության կրթական եւ երիտասարդական ծրագրերը, մասնավորապես խոսելով Հայկական վիրտուալ համալսարանի (ՀՎՀ)՝ ՀԲԸՄ կրթական նորագույն նախաձեռնության մասին:**

**ՀԲԸՄ ՀՎՀ-ն պաշտոնապես մեկնարկել է 2009 թվականի հունիսին եւ իր արժանի տեղը գրավել ՀԲԸՄ բազմաբնույթ երիտասարդական եւ կրթական ծրագրերի շարքում, որոնք միությունը, Հայ առաքելական եկեղեցու հետ միասին, ավելի քան 100 տարի շարունակ իրականացնում է աշխարհի հայաշատ համայնքներում:**

**ՀԲԸՄ ՀՎՀ-ի ծրագիրը Մոսկվայի հայ համայնքին ներկայացվել էր դեռեւս 2009 թվականի սեպտեմբերին՝ արժանանալով Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի ջերմ ընդունելությանը, ով հայտնել էր իր պատրաստակամությունը՝ աջակցելու ՀԲԸ միության Ռուսաստանում իրականացվելիք ծրագրերին:**

**Հանդիպման ընթացքում դոկտոր Երվանդ Զորյանը նշեց, որ այսօր ՀՎՀ-ի ուսումնական ծրագրից օգտվող երիտասարդների շրջանում ՌԴ-ից գրանցված երիտասարդները տոկոսային համադրությամբ առավելություն են կազմում մյուս հայաշատ համայնքներից գրանցված ուսանողների թվի նկատմամբ, եւ իր համար զարմանալի չի լինի, եթե այդ թիվը առաջիկայում կրկնապատկվի:**

**Սանկտ Պետերբուրգի հայ երիտասարդությունը մեծ հետաքրքրություն ցուցաբերեց միության ծրագրերի հանդեպ, որոնք վստահաբար իրենց ազդեցությունը պիտի ունենան կրթամշակութային հարուստ պատմություն ունեցող համայնքում:**

**Սանկտ Պետերբուրգի**
**Հայ առաքելական եկեղեցու**
**լրատվական կենտրոն**
**Տ Խադ քհն. Ղազարյան**

ԿՈԹՈՂԱՅԻՆ ԳՈՐԾ

# ԱՄՆ-ում վերահրատարակվել է «Հայաստանի պատմական բառարանը»

**Լենհեմում (Մերիլենդ) տեղակայված «Ռոումեն եւ Լիթլֆիլդ» հրատարակչական ընկերությունը վերջերս լույս է ընծայել դոկտ. Ռուբեն Պոլ Ադալյանի հեղինակած «Հայաստանի պատմական բառարան» կոթողային աշխատանքի (750 էջ) երկրորդ, վերանայված եւ նոր տվյալներով հարստացած հրատարակությունը, որը ներառվել է «Եվրոպայի պատմական բառարանների» շարքում որպես 77-րդ հատորը: Բառարանի առաջին հրատարակությունը, ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի օգոստոսի 21-ի համարի, իրականացվել էր 2002-ին:**

**Այդ ժամանակ Ռոուան համալսարանից դոկտոր Ռոբերտ Հյուսենը շնորհավորել էր դոկտ. Ռուբեն Ադալյանին՝ «որոշակի սահմաններում այդքան շատ տեղեկություն տեղադրելու իր հսկայական ջանքերի համար»: «Հատորը հրաշալիորեն գրված եզակի մի ձեռնարկ է, որտեղ ամփոփված փաստերն ու տեղեկությունները ուրիշ ոչ մի՛ տեղ միասին հնարավոր չէ գտնել», գրել էր նա: Իսկ Պորտլենդի պետական համալսարանից հանգուցյալ դոկտոր Լադիս Քրիստոֆը հավելել էր, որ «հատորը ընդարձակ եւ արժանահավատ տեղեկություններ է պարունակում դարեր շարունակ պարսկական, օսմանյան եւ այլ տիրապետությունների տակ չարչարված, բայց վերջերս իր անկախությունը ձեռք բերած Հայաստանի Հանրապետության մասին, նրա հասարակական-պատմական եւ քաղաքական կյանքի ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի մասին: Հատորը մեծապես հաջողված աշխատություն է»:**

**Ավելացնենք, որ դոկտ. Ադալյանը Կովկասի եւ Մերձավոր Արեւելքի երկրների պատմության մասնագետ է: Դոկտորականը պաշտպանել է Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանում: Այլ վայրերի թվում նա դասավանդել է Վաշինգտոն համալսարանի միջազգային գործերի Էլիոթ ֆակուլտետում, Ջոն Հոփկինսի համալսարանի միջազգային բարձրագույն ուսումնասիրությունների բաժնում եւ Ջորջթաուն համալսարանի արտաքին քաղաքականության ֆակուլտետում: Նա նաեւ Հայ ազգային ինստիտուտի եւ Վաշինգտոնի Հայոց ցեղասպանության ապագա թանգարանի տնօրենն է: Նախկինում եղել է Ամերիկայի հայկական համագումարի ուսումնասիրությունների եւ վերլուծությունների բաժնի տնօրեն: 1993-ին ավարտել է մի ծրագիր, որով հարստացրել է Ամերիկայի պետական արխիվները հայերի ցեղասպանությունը վկայող փաստաթղթերով: Դրանց հիման վրա Չեդվիկ-Հիլի ընկերությունը հրատարակել է միկրոչիպերի վրա 37 հազար էջ նյութ եւ 476 էջով մի հատոր-ուղեցույց ամերիկյան արխիվներում գտնվող Հայոց ցեղասպանության փաստաթղթերի վերաբերյալ: Նա նաեւ աջակցել է խմբագրմանը մրցանակի արժանացած «Ցեղասպանության հանրագիտարան» (1999 թ.) կոթողային հատորի:**

**«Հայաստանի պատմական բառարանը» կարելի է ձեռք բերել այցելելով www.scarecrowpress.com կայքը:**

Հ. Ծ.

*Ձեւ N 1*

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**
**առ 01.01.2010թ.**
**(ամսաթիվ, ամիս, տարի)**
ծածկագիրը

| | |
|---|---|
| Կազմակերպության անվանումը | **<<Մարսարմետ>> ՍՊԸ** |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | Առեւտուր , արտադրություն |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | 5211001364 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | 04219355 |
| Չափի միավորը | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | Արարատի մարզ գ. Մասիս հեռախոսը |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | Արարատի մարզ գ. Մասիս հեռախոսը |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Ապրանքներ | 140 | 320426 | 536859 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | | 4450 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 160 | 81266 | 48071 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 158 | 188 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 407262 | 589568 |
| Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ | 230 | 407262 | 589568 |

| ՊԱՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | 50 | 50 |
| Կուտակված շահույթ | 270 | 26379 | 59804 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 26429 | 59854 |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | 370 | 210188 | 210188 |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | | 175946 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 4426 | 16411 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | 252 | 1690 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին) | 440 | 165967 | 125479 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 380833 | 529714 |
| Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ | 500 | 407262 | 589568 |

Ղեկավար Ս. Մարգարյան
Գլխավոր հաշվապահ

*Ձեւ N 2*

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**Տարի 2009թ.**
**(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 1333691 | 2200040 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | (1030628) | (1963910) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 303063 | 236130 |
| Իրացման ծախսեր | 040 | (221412) | (128655) |
| Վարչական ծախսեր | 050 | (2068) | (1764) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 79583 | 105711 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝ | 080 | (9615) | - |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 69968 | 105711 |
| Ֆինանսական ծախսեր | 100 | (34591) | (50275) |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 35377 | 55436 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 35377 | 55436 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | (8998) | (22011) |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 26379 | 33425 |

* Սույն հոդվածների լրացումը պարտադիր է այն բաժնետիրական ընկերությունների կողմից, որոնց սովորական բաժնետոմսերը կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսերը հրապարակայնորեն վաճառվում են, կամ որոնք գտնվում են արժեթղթերի բաց (կանոնակարգվող) շուկայում սովորական բաժնետոմսեր կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսեր թողարկելու գործընթացում: Սույն հոդվածների գումարը ցույց է տրվում դրամներով (ոչ թե հազար դրամներով):

Ղեկավար Ս. Մարգարյան
Գլխավոր հաշվապահ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 21.09.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: